



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹՈՒԻՆ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

13 APR 2011

ՄՈՒԽՈՒ - ԱՄԻ

Դրամա III արարուածով.

(Պատահել է Ն... քաղաքում)

Հրատարակութիւն I.



ԹԻՖԼԻՍ
Էլեկտրոստատ ապահով «ՀԵՐՈՒՅՈ» լճինք,
Մադարևան փողոց 15.

1905

96

ԹՈՒԲԵՆ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԵԼՈՅ. 80. 0 5

834.99

Մ - 38 Ա/Վ

167

ՄՈՒԽՈՒ - ԱՄԻ

Դրամա III արարուածով.

(Պատահել է Ն... քաղաքում)

4036 382924

Հ ԾՈՒ ԲԱԿԱՆԻ Խ ՀԱՅՈՒ ԱՅՈՒՆԻ ԱԿՈՎՈՅ ՕԼՈՎՈՆՅՈՒ
Հրատարակութիւն I.




ԹԻՖԼԻԶ

ԷԼԵՖՏՐԱԿԱՐԺ ՏԱՊԱՐԱՆ «ՀԵՐՄՈՒ» բնկեր.,
Մադարեան փողոց 15.

1905

96



20.08.2013

58299

ԳԱՅ - ԳԱՅԻ ԲՈՒ

ինքուլտուրա III միավոր

Խառնուրդ ՀՀ Հ կազմություն

Дозволено цензурою. Тифлисъ, 24 февраля 1905 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Մուխսի-ամի—վաճառական, 65 տարեկան.

Անքառամբ—նրա կինը.

Սմբատ—մեծ որդին, 30 տարեկան.

Սաղայկ—նրա I զործակատարը, 45 տար.

Օհանիս—կոտր ընկած վաճառական, 60 տար.

Մարգարիտ—նրա կինը.

Սամսոն—նրա մեծ որդին, 25 տար.

Ռամբայկ—նրա փոքր որդին.

Վարդուհի—հարհանուհի աղքատ կին.

Պետոս

Վահեմին

Ս. քար

Խաչտուր

} վաճառականներ.

Պատրիկ—նօտարական քարտուղար.

Մարգիս—քաղաքի հարկ ժողովողի ծառայող.

Յովակիմ—վաճառականի գործակատար.

Յակոյ—Մուխսի-ամիւ ծառան.



ՆԱԽԱՐԱՐ

Հայձարտ 59. Հայձառուակից—Ենու-վայսառն
զամբիք առջ—Ենու տագալն
Հայձարտ 60. Ձերից հմ—ապրիլ
Հայձարտ 61. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 62. Մայր հմ—ապրիլ
Հայձարտ 63. Կապուտինակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 64. Մայր հմ—ապրիլ
Հայձարտ 65. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 66. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 67. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 68. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ

Հայձարտ 69. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Հայձարտ 70. Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ
Ա. Բ. Ա. Բ. Ո. Խ. Ծ. : Լ. Անդրանիկ
Հայուսիսակացիք և արք—Ենու բարտ

Տեսիլ

(Մի սենեակ հասարակ կարդերավ. բեմի վերեւի կողմում դրսած է մի սեղան, որի վերայ եռուս է հետահեր. սեղանի առաջ կանգնած մարտում է բաժակիները—Յակոն և ինքն իշան խօսում. բեմի մի ուրիշ կողմում գտնում է մի ուրիշ աւելի մեծ սեղան).

Յակոյ.—Տո, այդ թե՞նչ եղան, չեկան, չայները խմէին, կէս գիշեր եղաւ. այսօր մարդ ու կնիկ կարծես խօսքերնին մէկ են արել, որ տուն չգան: Երկի մի բան կայ, որ այդքան ուշանում են, նոր լուրեր են հաւաքում: Մեր Մուխսին բազարումը—կինը տներումը բամբասանք անելուց չեն կըշտանում, այդ բաւական չէ, գնում են եկեղեցի ու պակասը այնտեղ լրացնում: Ամին գոնէ էլի եկեղեցում պոչները մի քիչ իրար է տալիս. հեռուից նկատողները կը կարծեն, թէ ազօթք է կարդում. բայց մեր խանումը լաւ փառաւոր հագնուած, ուռած, ճակատին ոսկիթը շարած, կանգնած սրա, նրա հետ, վշիչում է ու բամբասանքներ անում: Ուրիշների ուշըն էլ գեղի իրան է զրաւում. և այն խեղճերին էլ չի թողնում որ գոնէ մի քանի ծունը դնեն. դէս տէրտէր հա պոռայ, գոչէ, լոռւթիւն, քեզ լսողն մվ էլ բարսում:

Խանումն այնտեղ կը գովէ իրան և կը հաւատացնէ ծանօթներին, թէ աշխարհում իրեն և ամռանու պէս բարի մարդիք չը կան, այ հաւատացողի տունը բանզուի հա հա հա' (ծիծաղ):

Խեղճ Օհանէսի տունը սրանը չը քանդեցի՞ն. նա ինքը մի ժամանակ քաղաքումն առաջի վաճառականն էր: Վերջին անգամ երբ գնաց Մուկով ապրանքի, երկար ժամանակ ուշանալուց յետոյ, եկաւ ինչ տեսաւ, իւր ընկեր Խաչատրովը բոլոր ապրանքն ու փողը տակովն է արել և առում է, թէ կոտրն եմ ընկել: Խեղճ մարդը որտեղ կը համնի. բերեցին, բաժանեցին, այն սուրբ մարդուն աղքատութեան մէջ զցեցին: Վերջերքս հէնց մի քիչ էր մնում, որ աները ծախէին. շատ փընտոց քաղաքումն, որ մի երկու հաւատարիմ մարդ գտնէ, իրան օգնելու, բայց չը գտնուեցան: Է՞՞ էլ ինչ երկարացնեմ, քեափուրիս զլուխը այդ օյինը չը գայ, հազիւ հազ այդ անբախտութիւնից քիչ աղաւում: էր, չը զիտեմ որտեղից եկաւ Մուխսուն գտաւ:

Սխափէր հարուստին Աստուած ամեն կողմից կը տայ, մեր Մուխսուն էլ մի այդպէս մարդ էր հարկաւոր, սկսեց իր խոշ լեզուն բանէցնել: կեղծաւութիւն անել: Խեղճ մարդը 2000 մանէթի առնելացուք ունէր: այդ փողի մուրհակները ծախեց Մուխսուն, նորա փոխարէն ստացաւ խանութի 20 տարուայ փասպանդայ ապրանքի կտորներ: Սաղայէլը մէկին երկու գրեց և 12 տոշ կոս հաշուեց: Մեր Մուխսու խանութը, նմանում է աւազականոցի. ամին նորանց պեան է: Սադայէլը խօմ փողի արկղը գրկած նստած է, ու ինչ էլ որ լինի, ախտեղից չի հեռանալ: մինչև

անգամ ճաշից յետոյ էլ ձեռքից բաց չի տալիս, այլ գլուխը գնում է նրա վրա և ննջում է: Հէնց որ մի փաքք թրսկոց է լսում, իսկոյն գարթնում և արկղին է նայում, ձեռքերն էլ խօմ գողդողում են:

Մանուկը—մուշտարուն, որ գալուց ապրանք է բերում, ցոյց տալիս, և ինչ ապրմնք, հաւատացնում եմ, եթէ խամ մուշտարի չի ընկնում դրանց ձեռքը, 20—25 տարուայ փասպանդայ ապրանք են քաշում նրանց ջանին մէկին երկու գնով: Միսը—կարօն խանութի առաջն է կանգնած, եթէ մուշտարին հակառակում է՝ ծեծեն:

Այդ ժամանակ դրանց պեսը, պալտում է բաղարը, խամ մարդիք որսում և իր խանութն ուղարկում: Է՞՞ թքել եմ այդպիսի առուտուրի վրայ չը լինի այդպիսի աշխատանքը:

Բանը նորանում է, մի քանի մարդից լսել եմ, թէ ամեն առաւօտներն էլ եկեղեցի է գնում. բայց ախպէր դա իմ կարճ խելքիս մօտիկ բան չէ, որովհետև մինչեւ եկեղեցուց գուրս գալը նա տասը տեսակ առուտուրներ կանէ. առաւօտը նա վաղ զարթնում է, մի բաժակ չայ իսմելով խանութ է վազում, շատ անգամ չայ էլ չէ խմում: Իսկ Սադայէլը այդ ժամանակ խանութն արգէն բացած է լինում: Բայց երբ որ Մուխսին գնայ, տեսնէ Սադայէլը ուշացել է, խանութը բացարած չէ—վայն եկել է և նրան տարել. Ամին աչքերը խփում և բերանը բացում է, խօսում է երկար ու բարակ և անիծում Սադայէլին: Իսկ այդ ժամանակ Սադայէլը քթի տակ սկսում է մրթմրթալ և դոզդողալ, իբր թէ մի բան է ուզում ասել. բայց եթէ նրան թողնես, Մուխսուց յետ մնացող պարուղ չէ. մի առակ կայ թուրքերէն «Օնա կոյասան նե-

ջան կաչար» համ համ համ (ծիծաղ), նա այնքան սատաւ
նայ մարդ է, որ Մուխսին նրան ամենից շատ
կը սիրէ, և նրան ծրագրով կը գործէ. գտել են իւ
բար համ (ծիծաղ) (դրսից ոտքի ձայն է զալիս) դա
անպատճառ խանումը կը լինի (դուռը բացում է եւ
ներս մտնում Անթառամը հատալով).

Տեսիլ II.

Անթառամ.—Այս հազը ինձ որտեղից պա-
տահեց:

Յակոյ.—(առանձին) Հալմ շատ բան կը պա-
տահի:

Անթառամ.—Յակոյ.

Յակոյ.—Հրամմէ խանում:

Անթառամ.—Մուխսին չի եկել տուն:

Յակոյ.—Ոչ խանում:

Անթառամ.—Բա մրտեղ է:

Յակոյ.—Եկեղեցու բագում կը լինի:

Անթառամ.—Դէն գնա, շուտ կանչի. բաս ես
ինչի չը տեսայ:

Յակոյ.—Բաշուտայ խանը. հալբաթ քո գը-
լուխը խառն էր. (գնում է):

Անթառամ.—Ճիշտ որ գլուխս խառն էր, ա-
հա 5 օր է, որ ժամ չէի գնացել, այսօր բաւակա-
նի լուրեր լսայ (նստում է աթոռի վրա մի բաժակ
թէյն առաջին) օխայ, այսօր ման գալուց յօդնեցի:
Տեսանք Յարթունի կնիկը էնպէս հագնուել, զար-
դարուել էր, կարծես երեսալի աղջիկ լինէր, հո-
գերս գլխիդ, հողերս: էն, էն, էն, էն, Մար-
դարի կնիկը, բօյը մի թիզ է (ցոյց տալով), գերիի
պոչը 3 արշին է, չաքմայի ճրճոցը ամբողջ բազն

էր բոնում, շեապի բարձրութիւնը մի արշին էր.
կարծես պօլկովնիկի կնիկ լինէր. Մտքումս ասա-
ցի. այս իմ ճակատիս ոսկիքը երկուսիդ էլ կառ-
նի, կծախի. Լաւ է ձեր մարդիքը իմ մարդուս
պէս ոչ հարուստ են և ոչ էլ ողորմած, թէ չէ ձեզ
խօսացնել չէր լինիլ, (ոտքի ձայնիր է զալիս). Մուխ-
սին եկաւ. (ներս է մտնում Մուխսին եւ) մօտենում,
նստում աթոռի վրայ, նրա հետեւից Յակոն իսկոյն եւ ետ
թէյ է բերում):

Տեսիլ III.

Նոյնը. Մուխսին և Յակոն.

Անթառամ.—Ի՞նչի ուշացար, Մուխսի, այսօր
քեզ ի՞նչ է պատահել:

Մուխսի-ամին.—Ի՞նչ պիտի լինի (բարկացած)
տունս բանդուեց, գնաց: (Յակոն դուրս է զնում):

Անթառ.ամ.—Ի՞նչի համար (զարմացած):

Մուխսի.—Միանգամայն տունս քանդուեց:
Օհանէսը 3 օր է, որ մերձամահ է, ոչ մէկը ինձ
ոչինչ չի ասում. մեղայ քեզ Աստուած, այսպէս
քեալագ չէր եղել մինչև հիմայ. կորան փողերս.
Ախ Սագայէլ, մի... Յակոյ, Յակոյ:

Յակոյ.—(բարձր) Հրամմէ աղմա:

Մուխսի.—Չոռը ծամմէ, շուտ այստեղ արի:

Տեսիլ IV.

Յակոյ.—Եկամ (ներս է մտնում):

Մուխսի.—Շնուտ գնայ, Սագայէլին այստեղ կան-

Հիր, ասա Մուխսին քեզ շուտ կանչում է՝ լսաւ բար քեր:

Յակոյ. — Ի՞նչ կայ, աղա, իեր լինի:

Մուխսի. — (բարկացած) Տօ, անիծուած, քեզ ինչ հրամայում եմ, գնա ու կատարիր:

Յակոյ. — Էլ ի՞նչի եմ հերսոտում, գնում եմ (գնում է) (միւս դռնից ներս է մտնում Սմբադը):

Տեսիլ V.

Սմբատ. — Բարի երեկոյ, ամի (նստում է):

Մուխսի. — Անթառամ, թէյ քեր Սմբատին. (Անթառամը բերում է):

Սմբատ. — Ամի, ի՞նչու ես այդպէս տխուր ու բարկացած:

Մուխսի. — Որդի, եթէ դու իմ տեղու լինէիր, ոչ թէ կը բարկանայիր, այլ կը գժուէիր:

Սմբատ. — Ի՞նչու, ամի:

Մուխսի. — Ինչու. — Օհանէսը մերձամահ է, Սաղայէլը և մայրդ գիտեցել են, բայց ոչ մէկը ինձ ոչինչ չի ասել, որ իր ժամանակին նրա հաշիւը գումարէինք և մուրհակ առնէինք: Հիմայ նա ծանր հիւանդ է. ես ի՞նչպէս գնամ նշանից մուրհակ առնեմ, վաղը մեռնի, յետոյ ես տուժեմ, փողերս կորչեն. — Ա՛խս...

Սմբատ. — Հանգիստ եղիր, ամի, մի տխրիր, համբերութիւն ունեցիր, կարող եմ ես ինքս գնալ Սաղայէլի յետեցից, նա ուշացաւ, դայ այս գիշեր հաշիւը փակէք. ինչ որ պարտ լինի, ես վաղը կը գնամ և մուրհակը կառնեմ:

Մուխսի. — Դէն, մի ուշանայ որդի, գնա, Աստուած քեզ օրէնէ (Սմբատը վերկենալով ուզում է

գնալ, այդ ժամանակ հաղի ծայն է տալիս): Մի՞ գնայ, Սմբատ, կարծես գալիս է. (ներս է մտնում Սաղայէլը հաղ ալով, նրա յետեւց Յակոն):

Տեսիլ VI.

Նոյնը, Սաղայէլը և Յակոն այս ժամ

Սաղայէլ. — Բարի երեկոյ: Յակոյ. — (առանձին) Փառք Աստուածոյ, չը իուտ-կայ է բռնել:

Մուխսի. } Անթառամ. } (միասին) Բարի երեկոյ:

Սմբատ. } Մուխսի. — Արի նստի, Սաղայէլ (դէպի Յակոն): Յակոյ, աթոռ բեր, (վերջինը բերում է):

Յակոյ. — (առանձին) Չնթրիր:

Մուխսի. — Օրհնուած, մէկ չես ասում գնամ տեսնեմ Մուխսին ինչպէս է:

Սաղայէլ. — Ամի, քո զլուխը վկայ, որ հէնց ձեր զրան մօտ պատահեցի Յակոյին:

Մուխսի. — Յակոյ, Սաղայէլին դուռը բանաւիս տեսան:

Յակոյ. — Աղա, մեր դուռը միշտ վակ է:

Մուխսի. — Տօ քառ, ես այդ չեմ հարցնում, դու Սաղայէլին որտեղ պատահեցիր:

Յակոյ. — Հա, այդ ես հարցնում — մեր զրան մօտ:

Սաղայէլ. — Ի՞նչ կայ Ամի, իսր լինի:

Մուխսի. — Ինչ պիտի լինի, դու էլ հարըստացար, մեզ չես ուզում նայես:

Սաղայէլ. — Ինչու:

Մուխսի.—Միթէ դու չը գիտես, որ մենք
Օհանէսի հետ հաշիւ ունենք. կթէ նա մեռնի, մենք
ի՞նչ պիտի անենք, մեր փողը պիտի կորչի: Ախար
դու հասակ առած մարդ ես, խօս երեխայ չես
(բարկացած):

Սադայիլ.—Հանգիստ եղիք, Մուխսի, ամեն
բան իրա կարգին է:

Մուխսի.—(աւելի բարկացած) Ի՞նչ բան է իրա
կարգին, զարմանալի մարդ ես, քեզ խօսք եմ ա-
սում, դու կանգնում ես, գլխիս աւետարան ես
կարգում, քեզ հարցնում եմ, դու, ինչո՞ւ նրա հի-
ւանդութեան մասին ինձ ոչինչ չես ասել:

Սադ.—Ամի մատաղդ վիճեմ, ինչո՞ւ ես բար-
կանում, կաց ասեմ էլի:

Մուխսի.—Ի՞նչ պիտի ասես, դարդակ բաներ:

Սադ.—Ախար մի համբերիր է...

Մուխսի.—Համբերեցի, հրամայի:

Սադ.—Ամի, քո գլուխը վկայ, ես մեղաւոր
չեմ, հէնց դրա համար էի գալիս քեզ մօտ, որ
նրա հաշիւը փակենք. վաղը գնանք և մուրհակ
առնենք:

Մուխսի.—Այ, հիմայ ապրես, ես այնպէս
էի կարծում, որ դու ուշը չես դարձնում:

Սադ.—Ի՞նչ ես խօսում, ամի, գիշերները
քունս չի տանում:

Մուխսի. Սադայէլ-ջան, դու պիտի այդ մա-
սին վաղուց հոգացիր (կամաց), որովհետև յանկարծ
աղէն կը գայ և հաշիւ կը պահանջի, ի՞նչ անենք
այն ժամանակի:

Սադ.—Ամի, ես այս գիշեր հաշիւը կը գրեմ,
իսկ վաղը Սմբատին կուղարկենք մուրհակ առներու
2500 մանէթի,

Մուխսի.—Յակնյ, սեղանը մաքրի, մոմերը
վասի, հաշուի պիտի նստենք:
Յակոյ.—Էս ըոպէիս, աղա (եւ կատարում է):
Սադ.—Ամի, մի բան մոռացայ քեզ պատմել,
էրեկ եկեղեցուց դուրս գալուց, յետոյ միամիտ-
տուն էի գնում. Օհանէսէնց դռնից անցնելիս, նրա
տղա Ռափայէլը մօտեցաւ և ասեց, թէ հայրիկս քեզ
խնդրում է: Ես իսկոյն հասկացայ: Ժամանակ չը
կորցնելով մի քայլ արեցի մինչև նրանց տունը-
մտայ ներս և ինչ եմ տեսնում, Օհանէսը սաստիկ
հիւանդ պառկած է: Բարեկեցի և հարցրի թէ ի՞նչ-
ես կամենում, նա սկսեց այսպէս խօսել. ամի, լաւ-
լոիր:

Մուխսի.—Լսում եմ, պատմիր:

Սադ.—Նա սկսեց այսպէս. մէկ էլ գիտես, ա-
մի, իմ երեկուայ նրա մօտ գնալս շատ օգտաւէտ-
է մեր գործին:

Մուխսի.—(զարմացած) Ի՞նչպէս:

Սադ.—Հա, այսպէս սկսեց. «Պարոն Սադայէլ-
լսիր իմ խնդիրս. ես ուզում էի Մուխսուն կան-
չէի մի քանի բան խնդրելու, բայց նրան չուզե-
ցի նեղութիւն տալ. որովհետեւ դուք ամեն օր-
մեր տան մօտից էք անցնում: Մուխսին կամ գուք-
միենոյն էք»: Ես էլ, ամի, չուզեցի երկարացնել,
ասեցի լաւ, խօսք ասա: Նա շարունակեց, «Հա-
հիմայ իմ խնդիրս այն է, որ ինձ 100 մանէթ թող-
տուէք, հաւատացնում եմ, զատիկը մօտենում է,
իսկ ես մի կոպէկ չունեմ ծախսելու: Երեխայոց ու-
սումնարանից դուրս են արել, թոշակի փող չու-
նեմ, տանը մի կտոր հաց չը կայ ուտելու: Եղբայր,
խնայէք ինձ, ումիից որ փող եմ ուզում, ոչ
մէկը չի տալիս, պատասխանում են, թէ քո բոլոր

հաշիւղ Մուխսու հետ է, նրանից էլ փող պահանջիր: Եղբայր, այդպէս բան չի լինիր, իմ ձեռքերս գուը կապել էք. պարոն Սադայէլ, երկրորդ անգամն եմ ինդ տալու: Եղբայր, քանից անգամ Մուխսուն ինգրել եմ, մեր հաշիւղ մաքրէ, ուշը չի դարձնում: Եղբայր, ի սէր Աստուծոյ, դուք գոնէ ինքներդ հաշիւղ արէք, դուք և ձեր Աստուածը, որքան կը լինի, եկէք մուրճակ տած: Մի վախենար: Երբ որ առողջանամ նորից հաշուենք: Պ. Սադայէլ, եթէ հաշուէք, 600 մանէթ էլ աւելացրէք, որ պիտի կանխիկ սահանամ. աղէս դործ է սկսում, նրան ուղարկեմ: Ի վերջոյ ես Մուխսուն հաւատում եմ, որ նա աւել չի հաշուի. բայց փողը անպատճառ հասցրէք... (դէպի Մուխսին): Ամի, Օհանէսը հէնց որ խօսքը չը վերջացրեց, աշքերս խփայ բերանս բաց արի: Դու ինձ այդ բանի համար ես կանչել այստեղ, ասացի, մատսթափ տալով նրա վրայ:

Անրառամ.—Ի՞նչու էիր մատդ թափ տալիս նրա վրայ, մեղք չէր. չը որ սրանից 10 տարի առաջ նա բեղանից հարուստ և ազնիւ վաճառական էր:

Մուխսի.—Լոիր, քեզ խօսք չի համնի, խըզառվ կին ես դառել մեր գլխին:

Անրառամ.—Խղճով չեմ, լաւ, դիցուք նա մի պատուաոր մարդ չէ եղել, եղել է աղքատ մարդ, չէ որ նա 25 տարով Սադայէլից մեծ է, բայ խիզէ է, որ նա մատը թափ տայ նրա վրայ: Օհանէսը մի հիւանդ մարդ է, որ տանջուում է 10 տարի, կոտր ընկնելուց յետոյ, հիմայ նրա դրութիւնը ևս առաւել կը վասանայ:

Սմբաս. — Դէն լաւ, ևս առաւել հարկաւոր չէ, դուք լոիր և հանգիստ հստիր քո տեղի: Մուխսի. — Շարունակիր Սադայէլ:

Սադայէլ. — Հա բարկացած պուացի. «Ես մի հիւանդ մարդ եմ, որ ոչ հէնց դրա համար ես ինձ այստեղ կանչէլ, որ ես բարկանամ և մեռնեմ, ընտանիք քաղցած մնայ, բայց դու Սիրիր կը կորչես»: Ի վերջոյ, ամի, ինչ ասեմ, մի այնպէս հարսանիք բռնեցի նրա գլխին, որ խեղճը չը կարողաւ մի խօսք խօսել, յեայ դուռը ամուր խըֆելով դռւս եկայ տնից և միբաշ մեր տուն վազեցի — հա հա հա (ծիծաղ):

Մուխսի. — (ուրախ) Սադայէլ ջան այդ մի եղելութիւնը մեղ շատ օգտաւէտ է. ասաց ինձի:

Սադ. — Ինչո՞ւ, Ամի:

Մուխսի. — Մէնք նրան այնքան մեծ փող չենք տալ, որ ինքը քաղցածութիւնից ստիպուած նորից կանչի, փող ուզի և միենոյն ժամանակ մուրհակ տայ:

Սադ. — Ամի-ջան ես էլ հէնց դրա համար ձեզ պատմեցի, այսինքն Օհանէսը ներկայումս շատ նեղութեան մէջ է: Աստուած օրհնէ մեր բաղացի վաճառականներին. մեր բաղդից, ոչ մէկը փող չի տալիս նրան:

Մուխսի. — Ի վերջոյ Սադայէլ, Աստուած քեզ մէկին երկու տայ, գու որ չը լինէիր իմ տունս հիմա քանդուել էր, բայց գործենիս յաջող է գնում (դառնալով Յակոյին). Բնչ արիր, սեղանը պատրաստեցիր. (մօտենում է սեղանին) համեցէք. (Սադայէլը եւ Սմբատը մօտենում են):

Յակոյ. — Պատրաստ է, աղա (առանձին) հստէք,

Առաջուած ձեզ անիմէ, տեսնեմ Օհանէսի տունը
ի՞նչպէս պիտի քանզէք, քանը այն չէ որքան այս-
պիսի բարի խորհուրդներ լինեն այստեղ կը վեր-
ջացնեն: Այ քանդուի այս տունը:

Մուխսի.—Յակոյ (ցոյց տալով) ահա սեղանի
վրայից հաշուի գաւթարը բեր ինձ:

Յակոյ.—(ցոյց տուած սեղանից բերում է) Սա է,
աղա:

Մուխսի.—Այ քօն, Օհանէսի հաշուի գաւ-
թարը բարակ է:

Յակոյ.—(Դնելով սեղանի վրա մի ուրիշն է բերում)
Սաէ:

Մուխսի.—Այ տղա, դու խօմ քօն չես:
Յակոյ.—Ոչ, քօն չեմ:

Մուխսի.—Որ քօն չես, այն գաւթարների
միջից չես կարողանում Օհանէսի գաւթարը բերեաւ:
Յակոյ.—(Ցետ է տանում եւ մի ուրիշը բերում)

Առ աղա, հաւատա էս լինի:
Մուխսի.—(Ձեռքից խում եւ շարտում գնտին,
ինքը զնում եւ բերում իր ուղած ցուցակը). Անզգամ,
այս 3 անգամ է, որ դու Օհանէսի գաւթարը չը
կարողացար բերել, դուքս կորի (բարկացած):

Յակոյ.—Զանմ, ես խօմ գիմնազիում չեմ
կարդացել, որ քեզ համար գաւթար ջոկեմ, քո
ամեն մի գաւթարդ մի թիլիսիմ է, ես ի՞նչպէս
հասկանամ: (դուքս է զնում):

Մուխսի.—Դուքս կորի, անպիտան, (դառնալով
Սաղայէլին) առ Սադ, բաց արա Օհանէսի հաշիւը
և բարձր ձայնով մէկ-մէկ կարդա, մենք կլսենք.
զգոյշ կաց չսխալուես, բան բաց չթողնես:

Սադ.—(առնելով բացում է) Հաշուի սչոտ չու-
նի՞ք:

Մուխսի.—Ի՞նչի չկայ, Յակոյ, Յակոյ (կան-
չում է):

Յակոյ.—(բարձր ձայնով) Հրամմէ, աղա, (ներս
է մտնում):

Մուխսի.—Չոռը ծամմէ, չես կարողանում
մի քիչ կամաց պոռաս, գնա միւս սենեակից սչո-
ուը բեր. (Յակոյն զնում է):

Մուխսի.—(Սադ-ին). Դու քո խելքդ գլուխդ
հաւաքի, առանց հաշուելու ասա, տեսնեմ Օհա-
նէսի պարտքը որքան կը լինի:

Սադ.—(կամաց) Խոստովանք լինի, ամի, մի օր
նորա հաշուեին նայեցի. 2000 մանէթ դուրս գա-
լով պարտքը մնաց 900—1000 մանէթ. (Ներս է
մտնում Յակոյն ձեռքին բռնած աղօ սրբելու վրձին եւ տա-
լիս է Սաղայէլին) առ, աղա:

Մուխսի.—(բարկացած) Տօ, անիծուած, քեզ մյդ
ասացին բեր:

Յակոյ.—Բա որ չօտքը ասեց, իր կօշիկների:

Մուխսի.—Էն ճաներով սչոտը:

Յակոյ.—Հէր օրնած, դէհ այդպէս ասա էլի.
(Յակոյն զնում բերում է) առ, աղա:

Մուխսի.—Տուք Սաղայէլին. (Յակոյն տալիս է
Սաղայէլին):

Սադ.—Ամի, որտեղ ես կը սխալուիմ, դուք
կուղղէք:

Յակոյ.—(առանձին) Ինչ պտուղ ես, որ սխա-
լուես:

Սադայէլ.—(կարդում է հաշիւը եւ միեւնոյն ժա-
մանակ համրիփի վրայ է աւելացնում ամեն նոր կարդացած
գումարը, իսկ միւսները զգուշութեամբ լսում են). 1893
թ. յուլիսի 9 նրա պարտքի դիմաց վճարել ենք



854 մանէթ, նոյն թուի յուլիսի 5 ևս տուած ենք 130
մ. 89 կ.: Նոյն ամսի 31-ին խանութից վերցրած է
1875 թուականի մնացած կտորներ, ընդամենը—
45 մանէթ 52 կ. ամի, այս գումարին աւելաց-
նենք ևս 15 մ., որովհետև այդ ապրանքը վաղուց
է մեր խանութում ընկած էր. դրա վնասը այսպի-
սի տեղից պիտի գումար բերել, ուրիշ հնար չը
կայ, ուրեմն գումարը կը լինի 60 ր.—52 կ. էս
էլ 60 ր.—52 կ. (համրիչին աւելացնելով):

Մուխսի.՝ Ապրիս որդի, միշտ այդպէս հա-
շուի:

Սադ.՝ Ամի, առաջուայ երկու գումարին վե-
րադիր չարեցի նրա համար, որ նրանք կանխիկ
վճարել ենք պարաքի դիմաց, շուտ աչքի կընկնի.
այդպիսի գումարներին վերադիր չեմ անելու,
իմացիր, որ յետոյ ինձ չը խանգարես. (շարունա-
կում է):

1894 թ. հոկտեմբերի 24-ին նոյն ապրան-
քից վերցրած—18 մ. 13 կ. սա էլ կը հաշուենք
28 մ. 13 կ. (համրիչին աւելացնելով). Նոյն թուի
մարտի 20-ին ևս նոյն ապրանքից 16 ր. 75 կ.,
իսկ մեր հաշուով կը լինի 26 ր. 75 կ. (համրիչին
աւելացնում է):

Մուխսի.՝ Սատուած, Սադ., քեզ աւելի շ-
նորհը տայ, դու որ չը լինէիր, իմ փողերս կոր-
չելու էին:

Սադ.՝ Ամենակն հանգիստ կաց, քանի որ
իմ գլուխս սաղ է, գու քէֆ արա (շարունակում է):
Նոյն թուի մայիսի 1-ին պարտքի դիմաց
տուած էինք 116 մ. 80 կ. (համրիչին աւելացնում է):

Մուխսի.՝ Սադայէլ ջան, մոռացար, վերադիր
անէիր:

Սադ.՝ Ամի, գա պարտքի դիմաց ենք վճարել:
Մուխսի.՝ Հասկացայ, մոռացել էի:
Սադ.՝ 1895 թուին յունիսի 21-ին խանու-
թից վերցրած է նոյն հաշուով մանը ապրանք—50
մ. վերադիր. 30 մ. կը լինի 80 մ. (համրիչին աւելաց-
նելով): Նոյն թուին մինոյն ամսի 25-ին մանը ապ-
րանք—50 մ., մեր հաշուով կը լինի 80 մ. (համ-
րիչին աւելացնելով): Նոյն թուին հոկտեմբերի 6-ին
խանութից վերցրած է 1870 թուականից մնացած
2 կտոր մահուղ—15 արշին. 3 կտոր սպիտակ,—9
արշին, 13 արշին հասարակ չիթ. մի քանի հատ
տախտակ և այլն. գումարը—25 մ. վերադիր 10
մ.—ընդամենը—35 մ. (համ. աւելաց.):

Մուխսի.՝ Զօրանաս, որդի:

Սադայէլ.՝ Նոյն թուին նոյն ամսին մանը
ապրանք 100 մ. վերադիրով կը լինի 125 ման.
(համր. աւելաց.) 1896 թ. յունվարի մէկին կանխիկ
փող վճարած ենք—1 ր. 75 կ., վերադիրով 3 ր.
75 կ. (համրիչին աւելացնելով): Նոյն թուին նոյն ամ-
սի մինոյն օրը կանխիկ տուած ենք 25 կ., իսկ
մենք կը հաշուենք 25 մ. (համր. աւելաց.):

Սմբատ.՝ Սադայէլ, այդքան վերադիր չի լի-
նի, 25 կոտէկը դու հաշուում ես 25 մանէթ, վերջը
տղէն կը գայ հաշիւ կը պահանջի, ապա ի՞նչպէս
դու այդ հաշիւը կը ներկայացնաս. չէ որ նորա
հայրն էլ հաշիւ կունենայ պահած:

Սադ.՝ Թնդ գայ, ես նրան կը պատասխա-
նեմ. հաշիւ կուղէ, չենք տալ. շատ ստիպէ, ահա
այս հաշիւը կը պարզագրեմ, նրան կը տամ, թող
տանէ, ջրով խմէ, Սմբատ, դու հաւատացիր ինձ,
որ նրա հայրը հաշիւ չունէ պահած, նա միայն
Մուխսուն է հաւատում:

Մուլսափ.—Որդի, Սաղայէլը իրա բանը լաւ գիտէ, դու մի խանգարիր:

Սալ.—(շարունակում է). 1896 թ. յունվարի վերջերին մեր խանութից Օհանէսը վերցրած է մանր ապրանք 10 մ. 95 կ. վերադիր 5 մ., ընդամենը 15 ման. 95 կոպ. (համրիչը աւելացնելով): 1897 թուին յունիսի 1-ին խանութից ապրանք է վերցրած 15 մ. կը հաշուենք 20 մ. (համր. աւել.): Նոյն թուին նոյն ամսի 12-ին ևս 10 ման., էս էլ 15 ման. (համր. աւելաց.): Մարտի 14-ին խանութից վերցրած ապրանք 10 մանէթի վերադիրով 15 մ. (համր. աւելաց.): Յուլիսի 6-ին կանխիկ վճարած իրան Օհանէսին 2 մ. 50 կ., սա էլ կը հաշուենք 3 մ. 50 կ. (համրիչին աւելացնելով): 1898 թ. 1-ին փետրուարի խանութից վերցրած փասպանդա ապրանքից 35 մ. 25 կ. վերադիրով 40 ր. 25 կ., սա էլ 45 ր. 25 կ. (համր. աւելաց.): Նոյն ամսին մանր հաշիւ և կանխիկ 90 մ. 70 կ. սա էլ 95 ր. 70 կ. (համր. աւելաց.): Նոյն թուին յունիսի 20-ին խանութից վերցրած միենոյն ապրանքից 24 ր. 25 կ., մենք կը հաշուենք 30 ր. 25 կ. (համր. աւել.): Յուլիսի 12-ին պարտքի դիմաց վճարած 117 մ. (համր. աւելաց.): Սեպտեմբ. 2-ին կոյր Յարութիւն. նրա պարտքի դիմաց վճարած 400 մ. (համր. աւելաց.): Մարտի 12-ին մանր հաշիւ 80 ր. 62 կ. վերադիրով 85 ր. 62 կ. (համ. աւելաց.): Ուրեմն, ամի, մինչև 1898 թիւը առանց տոկոսի պարտքը լինում է 2404 մ. 11 կ., իսկ այդ գումարի տոկոսը ահա այստեղ հաշուած գրած է, ընդամենը ուղիղ հաշուով առանց վերադիրի 753 մ. 08 կ. սա էլ 753 ր. 08 կ. (նախին գումարին աւելացնելով): Հիմա գիտես, ամի, ի՞նչ կայ.

մենք հաշուի ժամանակ շատ վերադիր արինք, և նրանք առանց տոկոս մնացին, ուստի 100 մ. էլ կը հաշուենք նրանց տոկոսը (աւելացնելով): Ուրեմն լինում է ընդամէնը 3257 մ. 19 կ. յետոյ (շարունակելով) նրան մինք պիտի վճարենք կանխիկ 700 մ. որովհետև նա ինքն ինձ առեց. սա էլ 700 մ. (աւելացնելով նախին գումարին համրիջում) (դառնալով Մուլսալուն) Իսկապէս ամի, այդ 700 ման. պիտի նրան տանք:

Մուլսափ.—Ո՞չ Սալ., ես մտածել եմ դրա համար, այսպէս կանենք, վազը ես կամ Սմբատը 100 մ. կը տանենք նրան կը տանք. եթէ նա հարցնի մնացածի համար, կասենք թէ կանխիկ փող չունենալու պատճառաւ, խնդրում ենք մի փոքր ժամանակ մեզ միջոց տաս, մինչև բամբակները ծախուի. ծախուելուց խօմ կը վճարենք, միամիտ եղիր: Մինչև մահը կը խարենք. հէնց որ մեռաւ, այդ 600 մ. էլ մերն է. լսեցիր, որդի Սմբատ, եթէ դու էլ գնաս, այդպէս կասես:

Սմբատ.—Շատ լաւ, ամի:

Մուլսափ.—Այդպէս լաւ չչ, Սաղայէլ:

Սալ.—Ի հարկէ, բա խօմ աչքնես բաց չենք տանելու 600 մ. համբենք առաջը:

Մուլսափ.—Դէհ, շարունակիր, Սաղայէլ:

Սալ.—Ուրեմն նրա ընդհանուր պարտքը եղաւ 3957 ր. 19 կ.: Ամի, դրան կաւելացնենք 2 տարուայ տոկոսը, ուղիղ 542 մ. 81 կ. որ 4500 մ. լրանայ, սա էլ 542 ր. 81 կ. (նախի. գում. աւելաց.): Վերջապէս նրա բոլոր պարտքը տոկոսով ու վերադիրով լինում է 4500 մ.: Սրանից ստացուած է 2000 ր. այդ գումարից գուրս գանք 2000 ր., մնում է ուղիղ նրա պարտքը—2500 մ., համաձայն

այդ գումարին անհրաժեշտ է մուրհակ առնել։
հիմա դուք ասէք տեսնեմ, նրանից ի՞նչպէս պիտի
մուրհակ առնեք։

Մուխսի.—Վաղը, Սաղայէլ, ես նրա մօտ
պիտի գնամ, բոլոր զործի համար կը խօսեմ,
ամեն բան կը վերջացնեմ, 100 մ. փող կը տա-
նեմ հետո, եթէ գործո յաջողի, իրան կը տամ,
եթէ ոչ, փողը չեմ տայ, վերադառնալուց տուն
100 մ. կը տամ Սմբատին. նրա միւս օրը, նատա-
րիուսի հետ կուղարկեմ մուրհակ առնելու և փողը
իրան տալու։ Այդպէս չէ։

Սադ.—Ի հարկէ, առաջ պիտի դու գնաս,
սերմը ցանես, որ յետոյ Սմբատը գնայ հնձէ.
(ոտքի ձայն է դախու)։ (Ներս է մտնում Ռափայէլը)։

Տեսիլ VII.

Նոյնը և Ռափայէլը.

Ռափայէլ.—Ամի, հայրիկս ասում է, վաղը
նեղութիւն կրէք ինձ մօտ գաք։

Մուխսի.—Ի՞նչ կայ, բալաս։

Ռափ. —Զը գիտեմ, եթէ իմանայի կասէի։

Մուխսի.—Նատ լաւ, կը դամ։

Ռափ.—Ամի, շատ է ինդրում։

Մուխսի.—Բաշուստայ. բալաս։ (Ռափայէլը
գնում է)։

Սադ.—Ախազէր, ամենայն դէպքում մեր գոր-

ծը յաջող է. էլի ինքն է ուղարկել մեր յետից։

Սմբատ.—Ճիշտ է, Սաղայէլ։

Սադ.—Սմբատ, թէ սուտ եմ ասում, թքիր

երեսիս։

Մուխսի.—Սադ., այդ բոլորը մի կողմը. բայց
եթէ նրա տղէն գայ մեզանից հաշիւ պահանջէ,
մենք ի՞նչ անենք այն ժամանակ, այդ հաշիւը ի՞նչ-
պէս ներկայացնենք. չէ՞ որ կը նկատի և մենք
այն ժամանակ սիրիբական կը դառնանք։

Սադ.—Ամի, ինչ խամ խօսքեր ես ասում։
Այն ժամանակ երբ մուրհակ առած լինենք, նրա
տղէն չը գայ, թող նրա պապը գայ, մեզ ինչ պի-
տի անէ. շատ կը խօսի, հաշիւ չենք ներկայաց-
նի և կը պատասխանենք, որ մենք ձեզ հետ հա-
շիւ չունենք, հայրդ մուրհակով փող է պարտ,
տուէր, ուրիշ ոչինչ, այն ժամանակ ուր ուզում
է, թող գնայ։ Այդպէս չէ, Սմբատ։

Սմբատ.—Ի հարկէ, դժուարը մուրհակ առնե-
լըն է, նրանից յետոյ թող ուր ուզում են գնան։

Մուխսի.—Սաղայէլ, ես ոչինչ չը գիտեմ, եթէ
հաշիւ պահանջին, բեզ հետ կը տանեմ և դու¹
նրանց հետ կը խօսես։

Սադ.—Շատ լաւ. (վեր է կենում) դէհ, բարի
գիշեր, կէս գիշեր եղաւ, գնամ։

Մուխսի.—Գնա որդի, բնէ, առաւօտը վաղ
վերկաց, խանութը շուտ բաց։ Եթէ դու չը լինէ-
իր, իմ փողերս կորչելու էին։ Աստուած քո որ-
դիք պահի. (Սադ. գնում է) Յակոյ, Յակոյ (կան-
չում է Մուխսին) Յակոյ, Յակոյ, (ձայն չկայ) Յակոյ,
(Ներս է մտնում Յակոյն)։

Տեսիլ VIII.

Մուխսի.—Նոյնը և Յակոյ.

Յակոյ.—Հրամմէ, մղատ։

Մուխսի. — Պոռալով գլուխս ցաւեց, անիծւած,
ի՞նչ եղաւ քեզ:

Յակոյ. — Աղա, դրուստն ասեմ, մենակ նստած
քունս եկաւ քնեցի. երազի մէջ էի, որ քո ձայնը
լսեցի, իսկոյն եկայ:

Մուխսի. — Իէ լաւ, շատ մի խօսիլ, գնա, Սար.
ճանապարհ դիր: (Յակոյն զնում է կանչելով): Սադայէլ
աղա, շունը բաց է, ճամբերիր ես գամ. (Սար. բեմի
յնտելից) դէն, շուտ եկ:

Մուխսի. — Կորած փողս գտայ: Հալալ է այն
աշխատանքը, որ Սադայէլը ուտում է, աժէ ախ-
պէր. կարծես Մոսկովի ճամալսարանն է աւար-
տել, այնքան բան գիտէ. ճաւատացնում եմ քեզ,
որդի, եթէ դա չը լինէր, իմ բոլոր փողերս կը
կորչէին:

Սմբատ. — Ճիշտ է, ամի, շատ ճարպիկ մարդ է:

Անքառամ. — Ի՞նչի այդպէս արեցիք, Մուխսի,
խեղճ չէ նրա ընտանիքը, նրա որդիերանց փողը
մենք կարո՞ղ ենք ուտել, չէ՞ որ նրա կինը մեզ
շարունակ կանիծէ, բա նրա անէծքը մենք ի՞նչ-
պէս վեր առնենք:

Մուխսի. — Անթառամ, քեզ վերաբերեալ գործ
չը կայ, դու հանգիստ նստիր և քո գործդ արա:

Անքառամ. — Ի՞նչի, Մուխսի, գործի ճիշտը
խօսելուց քո գուրը չի գալիս, միթէ նրա պարտ-
քը 2500 մ. է, որ ուզում էք մուրհակ առնէք:
Ի՞նչո՞ւ ճամար թոյլ տուեցիք Սադայէլին, որ այն-
քան հաշիներում աւելի հաշւէ: Ի՞նչո՞ւ ճամարէք
120/0 հաշւում: Ի՞նչո՞ւ ճամար ձեր տուած փողին
տոկոս էք հաշւում, իսկ նրանից ստացած 2000
մ. տոկոս չէք հաշւում, բաս յետոյ մեզ ի՞նչ կա-
սեն ուրիշները, չէ՞ որ պատուից կընկնենք և

մեր երեսին կը թքեն:

Մուխսի. — Ես քեզ ասացի, Անթառամ, քո
գործը չէ, մի խօսիր:

Անքառամ. — Ի հարկէ, Սադայէլին թողած
խօմ ինձ չես լսելու:

Սմբատ. — (բարկացած) Թող տեսնեմ, բաւական
է, ճամբերութիւնս կտրուեց. այդ էլ քանի ան-
գամ է, որ խօսակցութիւնը խանգարում է (ուզում
է ծնորով խփել):

Մուխս. — (բռնելով) Համբերիր, որդի. (կանչում
է) Յակոյ, Յակոյ օգնութեան հասիր:

Յակոյ. — (բեմի յետելից) Հաւաալա արա, աղա,
չոմախը բերեմ:

(Այդ ժամանակ բեմի յետելում Մուխսու մեծ եւ փոքր
որդիքը կրւում են իրար հետ. «Դու ես իմ հօրս փողիցը
շատ ծախսում» ասում է բարձր ճայնով փոքր տղին:
«Դու անցեալ ատարի Ռուսաստանում 2000 ր. փչացրի»,
պատախանում է մեծ տղին: Խօսում է փոքր որդին. «Ճաւ
արեցի քո զոգդ չէ», մեծ որդին բացում է ատրմանակը
նրան ասելով. «Ճայդէս է, ան, անա»: Գնդակը անվնաս
է անցնում: Այդ կոռու միջոցում Մուխսին Սմբատին բռնած

լսում է նրանց ատրմանակի ճայնից զոռում է)

Մուխսի. — Տունս քանդուեց:

Վ. Ա. Բ Ա. Գ Ո Յ Բ Ր

հանելով ննջում է, մինչև անգամ նա քնի մէջ էլ չի դադարում մտածմունքից. քուանամ ես, ուր է քո անցած ժամանակը, քո հարստութիւնը, կարողութիւնը, պատիւը. արդէն ամեն բան անցել է, մտածելու ժամանակ չէ, աչքերդ բաց արա, տես, քո ընկերներդ ինչ հարստութեան տէր են դարձել, գործակատարներդ ինչ կարողութեան տէր են եղել: Ուր է այն ժամանակդ, երբ փողոցից անցնելիս հարիւրաւոր մարդիք վլուխ կը տային և կամ խանութդ մտնելիս 6 գործակատար ուրքի կը կանգնէին: Յիմար է այն մարդը, երբ ասում է. Օհանէսը մտածում է: Շնորհակալ եմ որ չեմ գժուել, քանդուի Խաչատուրովեանը, կուրանայ երկու աչքերով, ինձնից վաս դրութեան համնի Մուխսի-ամին, կը կնապատկուի Սաղյէլի գողգողոցը, որոնք խանութ ունեն, ոչ թէ առեսուրի համար, այլ խեղճ մարդկերանց տուն քանդելու: Ոչ, ոչ, Աստուած մեզ այս է ցանկացել:

Ահա մօտենում է Զատիկը, տանս հաց չը կայ, երեխայոց ուսումնարանից դուրս են արել, փող չունեմ թօշակները տալու: Միթէ մեզ հարկաւոր չէ երեխայոց հագուստներ կարել, չէ որ նրանք մի ժամանակ ունեցել են, չէ որ ս. Յարութիւնին տէրտէր պիտի մեր տունը օրէնէ: Միթէ նրան պիտի փող չը տալ, և ասել՝ քեսակի եմ, նա ինչ կասէ, տէր, ամենայն բան կանցնի, գուայդ տէրտէրի փողը հասցրու մեզ, որովհետեւ նըրան նիսիա չի մնալ: Ի վերջոյ, ամենայն բանը փողն է: Է՞ն (հոգոց քաշելով) ինչ անեմ, դիմում ենք Մուխսուն՝ ասում է թէ ապահովութիւն չունիմ, ինչպէս տամ, միւսներին ասում ես դիտ-

Ա. Բ. Ա. Բ. Ա. Ե. Ա. Ե.

Տեսիլ I.

(Հասարակ սենեակ, մի կողմում դրուած է մի անկողնակալ, ծածկուած անկողինով, որի վրայ հիւանդ պառկած, խոր վնած է Օհանէսը, իսկ անկողնակալի մօս արոնի վրայ նսած է երա կին Մարգարիտը),

Մարգարիտ.—Անբախտ կին, (հոգոց քաշելով)
Միթէ ուխտել էիր, ամուսնուդ մահին արժանանալ: Մեղա Աստուածոյ, չը տեսնուած բաներ եմ տեսնում: Քեզանից խնդրել էի ինձ շուտ մահացնել ամուսնուցս, բայց ընդհակառակը, աչքիս առաջն է նրա դիակը. վիաք Քեզ, նա ինձանից արգար է և Դու չը կամեցար ենթարկել նրան աւելի վատ օրերի և չարչարանքի:

Դու չը կամեցար, որ նա տեսնէր իւր որդիկերանց մերկութիւնը, քաղցածութիւնը, որբութիւնը և այն:

Եօթը տարի չարչարուեց, մաշուեց, հիւանդութիւնից և Դու խնայեցիր նրան, բաւականութիւն պիտի տաս միմիայն հոգով:

Ապա ես ինչ պիտի անեմ, ինչպէս զեկավարեմ ես իմ որբերը, միթէ իմ ճակատագիրս այսպէս է: Փառք Քեզ, չեմ տրտնջում, ողորմած ես և եղճ մարդ (նայելով երեսին), տես ինչպէս հոգուց

մամբ, ոչ մէկը չէ տալիս ասելով՝ քո բոլոր հաշիներդ Մուխսու հետ է, նրանից ուղէ, էլ ինչ անեմ, մի նստելու տուն ունեմ, նա էլ կը ծախեմ, ձեզ կը տամ, միայն կեղծութիւն մի արեք, ջանմ. մի մարդ որ չի ընկնում ցերիս մէջ, փոխանակ դուրս հանելու, աւելի ևս խոր են, նետում ապերախաներ, չէք օգնում դուրս գալ, ապա էլ ի՞նչու էք դէպի խորքը նետում, (նիւանը շարժում է) կարծես զարթնում է:

Օհանես.—Մարգարիտ, օգնիր ինձ նստելու: (իսկոյն կատարում է):

Մարգարիտ.—Ի՞նչպէս ես այսօր զգում քեզ:

Օհանես.—Մի փոքր լաւ, Մարգարիտ, մի բաժակ ջուր տուր: (Մարգարիտը իսկոյն թերում է):

Մարգարիտ.—Առ. եթէ կամենում ես բժշկի յետելից ուղարկեմ:

Օհանես.—(բաժակը յետ տալով) Կարիք կը կայ: Մարգարիտ, Ռափայէլին այստեղ կանչի, երեկ նրան գործ պատուիրեցի:

Մարգարիտ.—(դուրս զալով կանչում է) Ռափայէլ, Ռափայէլ, Վարդուհի Ռափայէլին այստեղ կանչիր (Վարդուհին թեմի ետելից) Ռափայէլ մայրիկդ կանչում է: (Մարգարիտը ներս է մտնել, նրա յետելից Ռափայէլը):

Տեսիլ Ա.

Նոյնք և Ռափայէլը.

Ռափայէլ.—Ի՞նչ ես կամենում, հայրիկ:

Օհանես.—Ռափայէլ, երէկ քեզ ի՞նչ պատուիրեցի, կատարեցիր:

Ռափայէլ.—Ի՞նչպէս չէ, հայրիկ, հէնց նոյն ըսպէին գնացի:

Օհանես.—Տուն գնացի՞ր:

Ռափայէլ.—Այն, տուն գնացի, ներս մտայ, տեսայ Սաղայէլը և Մուխսին մի հաշիւ են տեսնում, և հաշուի մէջ քո անունդ յիշում, հէնց որ ինձ տեսան բոլորն էլ լսեցին: Ամուն ասացի, հայրիկս կանչում է, նա պատասխանեց, շատ լաւ, կը գամ և ես թողի եկայ:

Օհանես.—Այնտեղ ուրիշ մվրեր կային:

Ռափայէլ.—Ամին, Սաղայէլը, Սմբատը հաշիւ էին տեսնում, իսկ Սնթառամը լուռ նստած էր:

Օհանես.—Դէհ շատ ապրես, գնա, խաղատ (Ռափայէլը դուրս է գնում). Ուրեմն նրանք մեր հաշիւն են փակել, ով կիտէ տեսնես ի՞նչպէս են հաշւել, Մուխսուց այնքան երկմիտ չեմ, բայց Սաղայէլը անիծուած մարդ է: Միթէ Մուխսին պիտի ինձ զրէէ. նա բարի մարդ է, չեմ կարծում:

Մարգարիտ.—Ի՞նչու համար ես Մուխսուն այստեղ կանչում:

Օհանես.—Կին, միթէ դու չը կիտես մեր դըութիւնը:

Մարգարիտ.—Շատ լաւ զիտեմ, յետոյ: Օհանես.—Կանչում եմ 700 մ. փող ինդքեմ. 100 մ. մեզ համար, իսկ 600 մանէթը Սամսոն որդուս պիտի ուղարկեմ:

Մարգարիտ.—Յետոյ:

Օհանես.—Մէկ էլ նրանք երէկ հաշիւ փակել են, կը հարցնեմ պարտքիս բանակութիւնը, ես էլ իմ հաշիւ կը նայեմ, ստուգելուց յետոյ մի հատ մուրհակ կը տամ պարտքիս չափ:

Մարգարիտ. — Զգոյշ կաց, մինչեւ որ դու քո հաշուիդ չը նայես և նրանց հաշիւը չստուգես, մուրհակ չը տաս:

Օհանես. — Ի՞նչ ես խօսում, խօմ երեխայ չեմ:

Մարգարիտ. — Զգոյշ կաց: այ մարդ. կը խարէ քեզ Մուխսին, դու նրա խօսքերին չը հաւատաս:

Օհանես. — Մուխսում դու լաւ չես ճանաչում, նա շատ լաւ մարդ է: (ներս է մտնում Մուխսին):

Տեսիլ III.

Նոյնք և Մուխսին.

Մուխսին. — Բարեկ ձեզ, (բարեւում է):

Օհանես. — Բարեկ, համեցէք նստէք: (Մուխսին նստում է):

Մուխսի. — Ի՞նչպէս էք, պ. Օհանէս:

Օհանես. — Մուխսի-աղա, այսօր մի փոքր լաւ եմ: Ի՞նչ էր պատահել ձեզ. ահա քանի անգամ ուղարկում եմ ձեր յետեց:

Մուխսի. — Պ. Օհանէս, այս քանի օրերս գործերնիս մի փոքր շատ էին:

Օհանես. — Առևտուրդ ի՞նչպէս է:

Մուխսի. — Առևտուրդ չկայ. ամբողջ օրերը 4 մարդ նստած, խանութում մեր գրանից ենք ծախսում: Պ. Օհանէս, Սամոնից ի՞նչ լուր կայ, նամակ գրնեմ է:

Օհանես. — Անցեալ օրը փոստով նամակ ստացայ. գրում է, թէ նոր գործ է սկսել, միայն շուտով 600 մ. պիտի ուղարկեմ:

Մուխսի. — Շատ լաւ կը լինի:

Օհանես. — Մուխսի-աղա, քեզ այստեղ կանչե-

ցի որ մեր հաշւին նայենք, փակելով պարտքի փոխարէն մուրհակ տամ, այդպիսով մեր հաշիւը մաքրենք:

Մուխսի. — Ի՞նչ կը լինի, մաքուր հաշիւ ունենալը շատ լաւ է:

Օհանես. — Մուխսի այդպէս բան կը լինի. սրանից 3 շաբաթ առաջ ձեզանից հաշիւ եմ պահանջել, մինչև հիմայ լուել էք:

Մուխսի. — Մի նեղանար, եղբայր, ժամանակ չունենք, գործ-գործի վրայ է թափուել, կատարող չը կայ, բամբակներս հօ այս տարի, պ. Օհանէս, քո արկը, ուղիղ 20,000 մ. ֆես են անում:

Մարգարիտ. — (առանձին) Մի վախենար, այդ վնասի մի մասը մեզանից գուրս կը բերես:

Օհանես. — Վհաս չունի, հաշիւը յետոյ էլ կարելի է փակել. ես մի փոքր հաշւեցի, իմ պարտքը տոկոսով գուրս եկաւ մօտաւորապէս 1200 մ., 700 մ. էլ նորից պիտի տաս, այն ժամանակ ես քեզ կտամ մի հատ մուրհակ 2000 մ., իսկ աւելի համար վերջը կը տեսնուենք:

Մուխսի. — Ի հարկէ, այդպէս լաւ է, հաշիւը յետոյ էլ կարելի է փակել, իզուր տեղը դու հիւանդ ինչու ես քեզ նեղութիւն տալիս, առայժմս գու 2000 մ. մուրհակ տուր, ես քեզ կը վճարեմ 700 մ., բայց միայն պ. Օհանէս 100 մ. այսօր կտամ, իսկ 600 մ. համար մի առժամանակ ինդրում եմ սպասես, մինչեւ որ բամբակներս ծախուեն, յետոյ կը տամ, հիմայ կանխիկ փող չունեմ:

Օհանես. — Զի կարելի, Մուխսի, որովհետեւ ահա երկու նամակ է գրել Սամսոնը, ինչպէս որ լինի պիտի ուղարկեմ: Թէ չէ գործը կարող է փողի պակասութեան պատճառաւ ձեռքիցը գուրս գալ:

Մուխսի. — Պ. Օհանէս, որդկերանցս արևը, փող չունեմ, շատ եմ խնդրում, միայն 10 օր սպասիր:

Օհանէս. — Լաւ 10 օր կըսպասեմ, միայն չը խարես:

Մուխսի. — Միթէ դու ինձ չես հաւատում, միթէ ես քեզ կը խարեմ. կամ թէ քո փողը կուտեմ: Տունս քանդուի, որդիքս կոտորուեն, պ. Օհանէս, եթէ ես քեզ խարեմ:

Օհանէս. — Բաւական է, Մուխսի աղա, կը համբերեմ 10 օր, միայն 10 օրից յետոյ անպատճառ պիտի տաս:

Մուխսի. — Սմբատիս գլուխը վկայ, որ 10 օրից յետոյ անպատճառ կը վճարեմ:

Օհանէս. — Լաւ, թող այդպէս լինի:

Մուխսի. — Պ. Օհանէս, ես գնամ, Սմբատիս 100 մ. փող տամ ձեզ համար, մինչև իմ գնալըս, դու Բագրայէլին ուղարկիր խանութը, Սադայէլի հետ միատեղ գնան 2 հատ մուրհակներ գնեն և նատարիուսի մօտ տանեն գրելու, յետոյ Սմբատը և նատարիուսը քեզ մօտ կը գան:

Օհանէս. — Շատ բարի, միամիտ կաց, Մուխսի:

Մուխսի. — Մնացէք բարեաւ (գնում է):

Մարգարիտ. — Այ մարդ (բարկացած), ախար ես ձաքեցի, նրա մօտ խօսել չը կարողացայ գու խօմ չես գժուել, առանց փող առնելու մուրհակ ես ուշղում տաս. ախար մինչև երբ պիտի խարուխս, բաւական չէ: Տօ նրանք ուղում են քեզանից մուրհակ առնեն, որ յետոյ քեզ մի հատ կոպէկ չը տան:

Օհանէս. — Դու չես հասկանում, Մուխսին բարի մարդ է, իսկապէս եթէ Սադայէլը, կամ

Սմբատը լինէին երբէք չէի հաւատալ, հօ տեսար 70 տարեկան մարդը ինչպէս երդուեց, միթէ նրան չպիտի հաւատալ:

Մարգարիտ. — Նրանց գործն այդ է. մի կոպէկի համար տասն անգամ կերդուեն, դու եկ ինայիր մեզ, մուրհակ մի տուր մինչև որ փողդ լրիւ չստանաս, անիծուած մարդ, եկաւ մօլլի պէս դուռան կարդաց, համոզեց քեզ և գնաց: Խնդրում եմ քեզ, հաւատա իմ խօսքերին:

Օհանէս. — (Վրովովլած) Զը գիտեմ, դու ի՞նչ ես ուղում ինձանից, վաղը բժիշկ կը կանչեմ, թոյն կընդունեմ և կը մեռնեմ, այնուհետև ինչ կամենում ես, արա: (Խնդն իրեն) Զեն թողնում, եղբայր, որ հանգիստ մեռնենք:

Մարգարիտ. — Հոգ չէ: Ահա եթէ չես լսում ինձ, հէնց հիմա ես կը գնամ և ինձ կը կախեմ, բայց նզովեալ լինի քեզ համոզողը. (Եւ դուրս է գնում):

Օհանէս. — Աստուած իմ, որքան ես աչքից ընկած մարդ եմ, մինչև անգամ կինս էլ սկսեց իմ գէմ բողոքել. վայ ինձ, (ղէպի լիոջ կողմը) անգութ, միթէ, դու էլ չգիտես մեր գրութիւնը: Ճարահատեալ պիտի մուրհակ տամ: Ահա սպասում է ինձ գերեզմանս, որտեղ պիտի գտնեմ հանգստութիւն: Միթէ հարկաւոր չէ ծախը. ոչ, ոչ, ես չեմ թողնիլ իմ գիտակս գետնի վրայ: Տէր իմ, դու իմ կնոջս համբերութիւն տաս, նա իրան չվնասէ, եթէ նա իրան վնասէ (լացելով), արդիօք ով պիտի ինձ պահէ, ով պիտի ինամէ իմ որդիքը. ոչ ոք: (Ներս է մտնում Բագրայէլը):

Տեսիլ IV.

Օհանես.—Ռամփայէլ:

Ուափայէլ.—Հըամմէ, հայրիկ:

Օհանես.—Գնա մայրիկիդ այստեղ կանչի.
յետոյ գնա Սադայէլի մօտ. նրա հետ միասին
զնացէք, 2 հատ մի-մի հազարանոց մուրհակ ա-
զացաց, տարէք նատարիսոի մօտ, թող նա գրէ, յե-
ռէք, տարէք նատարիսոի մօտ, թող նա գրէ, յե-
ռէք, մուրհակները տաչ, յանձնիր Սմբատին կամ
Սուխում, նրանից յետոյ, արի ինձ լուր բեր,
միայն դպոյշ կաց մուրհակների գումարը լինի
2000 մ.:

Ուափայէլ.—Շատ լաւ, հայրիկ, դպոյշ կլի-
նեմ. (գնում է):

Օհանես.—Ախար այդ կինը մուր գնաց, միթէ
գնաց իրան կասելու, միթէ այդքան անողորմ է,
չէ ինայում ինձ. ոչ, նա գնաց հարուստների մօտ
խորհրդի. բայց եթէ 15 հարուստ հաւաքուին իմ
գլխին խելք չեն կարող գնել, որովհետև արդէն
ես լաւ եմ ճանաչել նրանց. մէկը միւսից յիմար
է, առաջինը կասէ թէ գնա, մի թողնիլ մուրհակ
տայ, միւսը կասէ թող տայ, երրորդը, կասէ գու-
ցէ պարտ է, որ մուրհակ է ուզում տալ, և հա-
զար ու մի խորհուրդներ կը տան. բայց ոչ մէկը
դուր չի գալու նրան: Ի՞նչ անեմ, եղբայր, իմ
բախտն այսպէս է, ում հետ գործ եմ ունենում,
վերջն այսպէս է լինում: Այդ բոլորը իմ յիմա-
րիւթիւնից է. եթէ ես էլ ուրիշների նման խա-
րեբայութիւններ անէի, զրկողութիւն գործ դնէի,
հիմայ ես էլ մի մարդ էի. բայց ոչ, լաւ է մեռ-
նել աղքաս, քան թէ ունենալ այնպիսի հարը-

առաջիւն. Թող ինձ յիմար անուանեն. (ներս է
մտնում Մարգարիտը եւ լուր նստում է մի կողմում):

Տեսիլ V.

Օհանես.—(կողմը) է՞ն չեմ կարողանում համ-
քերել (Մարգարիտին) մւր գնացիր, սիրելիս, այն-
պէս բարկացած: Ի՞նչու ես այդպէս վարդում ինձ
հետ, պատասխանիր:

Մարգարիս.—Ի՞նչ պատասխանեմ, բաւական
է որքան ես համբերեցի:

Օհանես.—Ի՞նչ եմ արել քեզ. միթէ ինձ չեմ
խղճում:

Մարգարիս.—Ես քեզ միշտ խղճում եմ, բայց
դու ինձ չեմ խղճում:

Օհանես.—Ախար ես քեզ ի՞նչ եմ արել, տու-
նըդ եմ քանդել:

Մարգարիս.—Եթէ գու իմ տունս քանդած
լինէիր, այնքան չէի նեղանալ, որքան քո այդ
ներկայ գործերիդ վրայ եմ նեղանում:

Օհանես.—Ի՞նչո՞ւ:

Մարգարիս.—Ահա ինչու, գու հէնց նրա հա-
մար ես մուրհակ տալիս, որ ինձ գատարանները
քաշ տան, գու այսքան տարուայ ընթացքում չու-
զեցիր գործդ մաքրել և ինձ տանջանքի մէջ ես
գցում:

Օհանես.—Ճօ, կին, գու գժումէլ ես, ինչո՞ւ են
քեզ գատարանները քաշ տալիս. ինչ պատճառաւ:

Մարգարիս.—Ահա ինչու, գու մուրհակ ես
տալիս Մուխուն, Աստուած մի արացէ, գու
ընկար, մեսար, ես այդ մուրհակի գումարը որ-
տեղից լրացնեմ. չէ՞ որ նա պիտի գանգատուէ,

ինձ դատարանը պիտի կանչի, յետոյ աներս ծա-
խն. միթէ այդ քիչ է, ես ինչպէս տանեմ այդ:

Օհանես.—Մարգարիտ, Աստուած գիտէ, որ
այդ հոգսերը, ես չէի կարդանայ տանել, բայց
դու կարող ես: Շատ լաւ, դու 700 մ. փող ճարի,
ես մուրհակ չտամ:

Մարգարիտ.—Ես որտեղից ճարեմ:

Օհանես.—Հէնց բանը դրանումն է, դրա հա-
մար ստիպուած մուրհակ եմ տալիս:

Մարգարիտ.—Ախար ես քեզ չեմ ասում մուր-
հակ մի տուր, ասում եմ, փողերդ լուն ստացի,
յետոյ:

Օհանես.—Զէ որ խեղճ մարդը, գեռ փող չու-
նի, ես նրան հօ չեմ խեղտելու:

Մարգարիտ.—Բա ինչպէս են ուրիշները քեզ
խեղտում:

Օհանես.—Ինչու դու այստեղ չէիր, չը տե-
սմը, թէ Մուխսին, ինչպէս էր երդւում և ասում
որդիքս կոտորվին, թէ 600 մանէթը 10 օրից
յետոյ չտամ, միթէ նրա համար փողն առաւել
է, քան թէ որդիքը:

Մարգարիտ.—Ուրեմն դու մինչև հիմա չես
հասկացել, որ նրա համար մի կոպէկը թանգ է,
քան իւր որդիքը:

Օհանես.—Է՛ս սուս կաց, ինչ ես դարդակ բա-
ներ խօսում (ներս է մտնում Օհափայէլը):

Տեսիլ VI.

Օհանես.—Օհափայէլ, կատարեցիր, թէ ոչ:

Օհափայէլ.—Հայրիկ, ինչպէս պատուիրեցիր,
այնպէս էլ կատարեցի.

Օհանես.—Ի՞նչպէս վարուեցիր մուրհակների
հետ:

Օհափայէլ.—2000 մ. մուրհակ առանք, գրել
տուեցինք Սաղայէլի հետ, յետոյ բերեցինք և
յանձնեցինք Ամուն:

Օհանես.—Շատ ապրիս. (Օհափայէլը փուրս է
գնում, միւս դռնից ներս է մտնում Սարփիսը):

Տեսիլ VII.

Սարգիս.—Բարե պ. Օհանէս:

Մարգարիտ.—(Կողմը) Աչքներս լոյս, էլի եկաւ:
Օհանես.—Բարե, ինչ կայ, Սարգիս:

Սարգիս.—Եկա առողջութիւնդ հարցնեմ:

Օհանես.—Լաւ եմ. բայց խարում ես, մինչև
որ գործ չլինի, դու այստեղ չէիր գալ:

Սարգիս.—Տղամարդ մեռնեմ, չէ:

Օհանես.—Սպահ ի՞նչ կայ:

Սարգիս.—Ճիշտը եկել եմ հարկի համար:

Օհանես.—Քեզ ո՞վ է ուղարկել:

Սարգիս.—Հարկ ժողովողը:

Օհանես.—Սուս ես խօսում:

Սարգիս.—Տղամարդ մեռնեմ, չէ:

Մարգարիտ.—Ճո ջանմ, սուս է ասում. ես ե-
րէկ հարկ ժողովողին հարցրեցի, նա ասեց, թէ
ես նորան տարեկան միանգամ կուղարկեմ հարկ
հաւաքելու:

Օհանես.—Համբերիր, Մարգարիտ, հիմա, գո-
րան ցոյց կը տամ, Սարգիս, անցեալ տարի մի
էր հարկը ժողովում:

Սարգիս.—Դու:

Օհանես.—Շատ լաւ, ես քեզ ե՞լու էի ուղար-

կում հարկ ժողովելու, ու տարէն քանի անդամ:

Սարգիս.—Տարէն մէկ անդամ և իւր ժամանակին:

Օհանես.—Ապա ինչու զու ամեն օր երեք անդամ, հարկի կդայիր:

Սարգիս.—Տղամարդ մեռնեմ, չէ:

Օհանես.—Ի՞նչպէս չէ, ես մի քանի մարդուց հարցը եցի. այսպէս ասեցին, առաջուը Սարգիսը բազար գնալուց կուզէր, ճաշին տուն գնալուց, և իրի կունն էլ յետ դառնալուց: Այդպէս է, Սարգիս:

Սարգիս.—Տղամարդ մեռնեմ չէ, այդպէս չէ: Ես հարկի համար չէի գնալ:

Օհանես.—Բա ինչու համար կգնայիր:

Սարգիս.—Ճիշտ ասեմ, կգնայի, որ մի թառ արադ խմէի:

Օհանես.—Այ քո տունը չքանդուի, այդ մի թառ չեղաւ, ախար:

Սարգիս.—Դէհ, պ. Օհանէս, մի թասը մարդու ինչ կանէ. առաջի տունը մտնելուց մի թառ էի խմում, երկրորդումը,—մէկը, երրորդումը—մէկը, չորրորդումն արդէն գլուխս տաքանում էր, հինգերորդումը հարբում էի և այդպիսով շարունակում էի: Պ. Օհանէս, հէնց որ չէի մտնում, որ տունը որ լինում էր, իմ բնութիւնս գիտեն, իսկոյն արադ են բերում, բայց սուտ են ասում, հարկի անուն չէի տալ:

Օհանես.—Անիծուած, դէհ այդպէս ասա, էլի, Մարգարիտ, մի արադ տուր Սարգսին (Մարգարիտն իսկոյն բերում է եւ տալիս է նրան):

Սարգիս. Աստուած առողջութիւն տայ, Օհանէս ապէր, միշտ արադը ձեր տնից անպակաս լինի: Մէկ էլ այստեղ գալուց արդէն առողջ տես-

նեմ, այն ժամանակը երկուսը պիտի խմեմ (խում է) օխայ:

Օհանես.—Մինչև հիմայ քանիսը խմած կը լինես:

Սարգիս.—Տղամարդ մեռնեմ չէ, հէնց առաջինն է. (բաժակը յետ տալով). մնացէք բարեաւ, շէն մնաք: (զնում է):

Սարգարիս.—Գնալու լինի, գալու չլինի:

Օհանես.—Օ՛ֆ. Մարգարիտ, տարութիւնս բոնեց վերկաց ինձ ծածկիր մի փոքր պառկեմ: (Պառկում է, Մարգարիտը ծածկում է եւ նա բնում է: Տիրում է լութիւն):

Մարգարիս.—(կամաց) Դրութիւնը կրկին վատացաւ, գոյնը փոխուեց, երկու օր հազիւ ապրէ: Հիմա էլ Մուխսին գալու է, մուրհակ առնելու, զրա զրութիւնն էլ վատ է, նստել չի կարողանում, ինչպէս անեմ. եթէ անպատուես, խրկես, չի լինիլ, կասեն այդ կինը զժուել է. գնները կողպէս, ներս չը թողնես, այդ էլ յիմարութիւն է: Թոյլ տաս մուրհակ առնեմ, վայ թէ վերջը նեղացնեն: Գնան դատարանը գանգատուին և բերեն աներս ծախեն. դէհ, արի զնա դատարանը խընդիրք առաջարկի, որ մի փոքր յետածգեն այդ զործը: Դրա համար էլ հարկաւոր է ունենալ փող և օգնութիւն. վաղը կամ միւս օրը պիտի մեռնի, ես ինչ պիտի անեմ. չունիմ ազգական, չունիմ բարեկամ: Անիրաւներն այնպիսի մի օյին խաղացին իմ գլխին, մինչև անդամ մոռացայ 10 օր առաջ հեռագրել Սամսոնին գար, նա միայն կարող է նրանց հետ վարուել: Այն ժամանակ, երբ հարուստ էի, փողս շատ էր, բարեկամներ և ազգականներ էլ շատ ունէի, և ամենայն օր մեր տանն

էին գտնւում, հէնց որ աղքատացայ, փողս գնաց,
բարեկամներս և ազգականներս էլ փողիս հետ
գնացին: (նոզոց հանելով) է՞հ ի՞նչ անենք, ունա-
սարակ հէնց այդպէս է, ումը որ փող ունի, ունի
և բարեկամ, ազգական, որոնք միմիայն յարգում
են փողին, և ոչ թէ Տիրոջը: (ներս է մտնում Վար-
դուհին):

Տեսիլ III.

Վարդուհի.—Բաջի, ի՞նչպէս է Օհանէսը:

Մարգարիտ.—Է՞հ, Վարդուհի, դէպի վատն է
գնում: Կէս ժամ առաջ լաւ էր, բայց հիմա դրու-
թիւնը վատացաւ, յոյս չը կայ ապրելու, Վար-
դուհի:

Վարդուհի.—Է՞հ, բաջի, սիրտդ մի նեղիր,
Աստուած ողորմած է:

Մարգարիտ.—Աստծոյ կամքն է, Վարդուհի:
Ռափայէլին այստեղ կանչի:

Վարդուհի.—Այս բոպէիս: (գնում է):

Մարգարիտ.—Բախտաւոր ես, քշուեցիր աշ-
խարհից: Տեսար հարստութիւն, աղքատութիւն,
հիւանդութիւն, փորձեցիր մարդկութիւնը, և ի
վերջոյ մեռնում ես առանց կոպէկի, արդար ես,
երանի քեզ: Արդեօք ի՞նչպէս պիտի թեզ հետ դա-
տատանան գան այն անձերը, որոնք այս դրու-
թեանդ պատճառը եղան, մի՞թէ այնաեղ էլ հա-
րստութիւն և աղքատութիւն կայ: Արդեօք այն-
տեղ էլ հարստի խօսքը առաջ է, փողով պիտի
արքայութիւն մտնեն, այնտեղ Մուխսին, Մարգա-
յէլը քեզ էլի պիտի խաբեն և զըկեն: (ներս է մըտ-
նում Ռափայէլը):

Տեսիլ IX

Ռափայէլ.—Մայրիկ, ի՞նչ էիր ասում:

Մարգարիտ.—Ռափայէլ, մի հեռագիր տուր
Սամսոնին, թէ հայրդ սաստիկ հիւանդ է, շուտ եկ:

Ռափայէլ.—Մէթէ, մայրիկ, սաստիկ հիւանդ է:

Մարգարիտ.—Ոչ որդի այնպէս գրէ, որ շուտ
գայ: (Ռափայէլը կրում է վերջացնելով):

Ռափայէլ.—Ահա Մայրիկ այսպէս գրեցի.
Հայրդ սաստիկ հիւանդ է, շուտ արի, և քո ա-
նունդ ստորագրեցի:

Մարգարիտ.—Ապրիս, դէն տար տուր:

Ռափայէլ.—Փող տուր, մայրիկ:

Մարգարիտ.—Հա մոռացայ (զրպանից հանելով)
առ: (Ռափայէլը առնում է եւ դուրս գնում):

Մխալուեցի, պիտի շուտ հեռագրէի. ամ-
բախտ ամուսինս էլ կարօտ մնաց Սամսոնից, եթէ
նա հիմայ այստեղ լինէր, բոլոր հաշիւները կը
մաքրէր և ես նեղութեան մէջ չէի ընկնիլ: (ներս
է մտնում Վարդուհին):

Տեսիլ X.

Վարդուհի.—Բաջի, Ռափայէլը եկաւ:

Մարգարիտ.—Այն, եկաւ, ես նրան բան
պատուիրեցի կատարելու:

Վարդուհի.—Բաջի, ինչ երկար ընեց:

Մարգարիտ.—Վարդուհի դրութիւնը վատ է,
խելքս քրանից բան չի կարում: վախենում եմ
մեռնի, և ես մենակ ի՞նչ անեմ:

Վարդուհի.—Ապա ի՞նչու չես հեռագրում,
Սամսոնը գայ: Մի՞թէ այսպիսի դէպքերում նա

տուն պիտի չգայ, և հօրից կարօտ մնայ:

Մարզարիս:—Հէնց հիմայ հեռազրեցի, բայց
արդէն ուշ է, չեմ կարծում հօրը արժանանայ
տեսնել:

Վարդուհի.—Հէր օրհնած, մի քանի օթ առաջ
հեռագրէիր, կզար հօրը կը տեսնէր և քո գործոց
էլ լաւ կը լինէր, հօր մահից յետոյ գայ, էլ ինչ
շնէ:

Մարզարիս:—Դէ՞ ինչ անեմ, այսպէս պա-
տահեց. չկարողացայ շուտ հեռազրել, սխալուե-
ցի: (ներս է մտնում փոազ Յովակիմը Վարդուհին դուրս
է գումա):

Տեսիլ XI.

Յովակիմ.—Բարե, տիկին:

Մարզարիս.—Բարե, համեցէք (Յովակ, նստում է):

Յովակիմ.—Ի՞նչպէս է պ. Օհանէսը:

Մարզարիս:—Լաւ չէ, երկիւզալի է:

Յովակիմ.—Տիկին, ինձ փաստաբանը ուղար-
կեց և պատուիրեց ձեզ ասելու, որ դուք յաջո-
ղացնէք, համոզել պ. Օհանէսին մուրհակ չը տալ:

Մարզարիս:—Չեմ կարողանում համոզել քա-
նի անգամ փորձեցի, չյաջողուեց, չէ համոզւում:
Յովակիմ.—Աշխատիր, երրորդ, չորրորդ ան-
գամը փորձել, համոզել:

Մարզարիս:—Իդուք է, նա համոզուողը չէ,
կամքի տէր մարդ է, մի բան որ ասեց, պիտի
կատարէ, թէ կուզ հազարներ մնաս բերէ:

Յովակիմ.—Տիկին, դու զիտես, ես կամ փաս-
տաբանը ձեր լաւն ենք ցանկանում, ուզում ենք
ազատել չար գաղանների բերանից. նրանք, Մուլ-

սին կամ Սադայէլն անիրաւ և անխիղճ մարդիկ
են, աչքի առաջ ունեցիր, Աստուած մի արասցէ,
եթէ պ. Օհանէսը մահանայ, Յ օր չանցած քեղա-
նից իրանց փողը պահանջելու են և քո տներդ
ծախնլու են իրանց պարտքի դիմաց:

Մարզարիս.—Պարոն, այդ բոլորը ես շատ
լաւ զիտեմ, և մինչև անգամ բարկացած մի քանի
անգամ իրան ասեցի, բայց չը համոզուեց, և բար-
կացաւ:

Յովակիմ.—Ապա ի՞նչ պիտի անես, թոյլ ես
տալու, որ մուրհակ տայ:

Մարզարիս.—Ռւզում եմ իսանգարել, բայց
հնար չը կայ:

Յովակիմ.—Ի՞նչպէս հնար չը կայ:

Մարզարիս.—Ապա ի՞նչ անեմ:

Յովակիմ.—Երբ Մուխսին գայ, անպատուիր
և մի թոյլ ներս մտնէ:

Մարզարիս.—Այդ էլ եմ մտածել, բայց չեմ
կարող, ամօթ է:

Յովակիմ.—Վերջապէս համոզելով, բոնու-
թիւնով, մի թոյլ տալ մուրհակ տայ, դուք խեղճ
էք և խեղճ են քո որդիքը:

Մարզարիս.—Հոգ չէ, նա որ չխղճաց, ա-
պա ես ինչի պիտի խղճամ, թոյլ 1000 մ. աւել-
նորդ գնայ կորչի, բաւական է ինձ վրդովեցնէք,
գոնէ թոյլ տուէք հանգիստ մեռնէ, մի քանի օր
հազիւ ապրէ: Այսքան տարիների լնթացքում, նա
իր հաշիւը չը մաքրեց, հիմա մահուան օրերում
ես պիտի նեղացնեմ: Թողէք հանգիստ գոնէ գե-
րեզման իջնէ:

Յովակիմ.—Դուք զիտէք, մենք ձեր լաւն ենք
կամենում (վր կինալով), մնացէք բարեաւ (գնում է):

Մարգարիտ.—Զանմ չեն թողնում, խեղճը գոնէ հանգիստ մեռնէ, վաստաբանն այսպէս աշեց, իրա համար արեց, նա էլ իր օգուստն է է վնարում, շատ հարկաւոր է թէ տնելը կծախէ, իրա փողը վերցնելուց յետոյ, ո՞ հանգիստ կլինեմ, (ոտքի ծախը են լւում) կարծես եկան (կանգնում է ներս են մտնում Ամբարը եւ նատարիսը թղթի պահարանը թեւի տակ):

Տեսիլ XII.

Պատրիկ. { (միասին) Բարեւ տիկին: (բարեւում Սմբատ. { են):

Մարգարիտ.—Բարեւ ձեզ, համեցէք, նստէք (նստում են):

Պատրիկ.—Թնած է պ. Օհանէսը:

Մարգարիտ.—Այն, ահա երկրորդ ժամն է, որ քնած է:

Սմբատ.—Տիկին, ի՞նչպէս է առողջութիւնը:

Մարգարիտ.—Օրէց օր դէպի վատն է գնում:

Պատրիկ.—Բժշկի դիմում էք:

Մարգարիտ.—Ի՞նչպէս չենք դիմում, շարուշ նակ բժիշկ էր գալիս, ահա միայն այս երկու օր է, որ էլ բժիշկ չէ ընդունում:

Սմբատ.—Ի՞նչու համար է արգելում բժշկի գալը:

Մարգարիտ.—Չեմ կարողանում հասկանալ:

Պատրիկ.—Դուք բժշկից չը կարողացաք իմանալ զրա վերջաւորութիւնը:

Մարգարիտ.—Հարցրեցի, ուղիղը չասեց, բայց միայն ասեց, Աստուած գիտէ:

Պատրիկ.—Ուրեմն ծանր պատասխան տուեց:

Մարգարիտ.—Այն:

Պատրիկ.—(Սմբատի երեսին նայելով) Դա...

Սմբատ.—Ո՞ւշ կզարթնէ տիկին:

Մարգարիտ.—Չգիտեմ, պիտի որ զարթնէ, ժամանակն է:

Պատրիկ.—Մի անհանգստացրէք թողէք ննջէ:

Սմբատ.—Մամսնից ինչ լուր կայ:

Մարգարիտ.—Այս երկու փոստ է, նամակ չը կայ, բայց այսօր հեռագրեցի, որ գայ:

Սմբատ.—Մխալուել էք, իզուր տեղն էք աւելնորդ ծախսեր անում, ու նրան էլ գործից խանգարում:

Մարգարիտ.—Իզուր չէ, պ. Սմբատ, մենակ եմ, ճարահատեալ հեռագրեցի ուրիշ հնար չը կար:

Սմբատ.—Այս, այդ էլ ճիշտ է, բայց միայն գործը կարող է խանգարուել:

Մարգարիտ.—Ել ուրիշ ճար չունիմ. (այդ միջոցին Օհանէսը սկսում է շարունակ հազար զարթնելով):

Օհանիս.—Մարգարիտ, մի բաժակ ջուր տուր (իսկոյն բերում է խմում է, բաժակը յետ տալով, հարցնում է կամաց), նրանք ովքեր են:

Մարգարիտ.—(կամաց) Նատարիսը և Սմբատըն են:

Պատրիկ. { (միասին) Բարեւ, պ. Օհանէս:

Օհանիս.—(խեղտուած ձայնով) Բարեւ ձեզ:

Պատրիկ.—Պ. Օհանէս, ի՞նչպէս էք:

Օհանիս.—Ե՞ս պ. Պատրիկ լաւ չեմ:

Պատրիկ.—Այսինքն ի՞նչպէս էք ձեզ զգում:

Օհանիս.—Օրէց օր դէպի վատն եմ գնում:

Պատրիկ.—Ի՞նչու չէք թոյլ տալիս բժշկ գայ:

Օհանես.—Բժիշկը սրանից յետոյ ինձ չէ կառող օգնութիւն տալ:

Պատրիկ.—Ոչ թէ օգնութիւն կարող է տալ, նա ուզզակի կարող է բժշկել ձեզ:

Օհանես.—Ես, Պատրիկ, բժշկից արդէն յոյսս կտրել եմ, նրանից ինձ փրկութիւն այլ ևս չը կայ, իմ մնացել է միայն Աստուած:

Պատրիկ.—Սխալում էք, պ. Օհանէս:

Օհանես.—Ոչ, ընդհակառակը, ես շատ համակրուժ եմ, բայց միայն ժամանակն անցել է, ներողութիւն, պ. Սմբատ, խնդրած բերել էք:

Սմբատ.—Ի՞արեկէ:

Օհանես.—Նեղութիւն կրէք յանձնէք Մարգարտին: (Սմբատը 100 մ. համրելով յանձնում է Մարգարտին, վերջանալուց յետոյ) ուղիղ է Մարգարիտ:

Մարգարիտ.—Այս ուղիղ է:

Օհանես.—Իսկ մնացածի համար, պ. Սմբատ, Մուխսին ձեզ ոչինչ չի պատուիրել:

Սմբատ.—Այո, պատուիրել է, միայն ինչպէս Մուխսին ձեզ ասել է, 10 օրից յետոյ:

Օհանես.—Վնաս չունէ, միայն...

Սմբատ.—Ի՞նչ էք ձեզ անհանգստացնում իդուր, ուրեմն մենք խարեւայ ենք, և դուք Մուխսուն չեք հաւատում:

Օհանես.—Ներողութիւն, պ. Սմբատ, բայց խոստացած ժամանակին պիտի անպատճառ վճարէք, առանց դժուարանալու:

Սմբատ.—Ուրիշ ոչինչ չիմ կարող խօսել, միայն 10 օրից յետոյ փողդ լիովին կստանաք, եղեք միամիտ և իզուր տեղը ձեզ մի անհանգըստացրէք:

Օհանես.—Շնորհակալ եմ, Մուխսին էլ այդ-

պէս խոստացաւ, բայց ինդրում եմ մի կերպ աշխատեք, մի փոքր շուտ վճարել, որովհետեւ փողի կարիք կայ:

Սմբատ.—Շատ բարի, կաշխատենք շուտ վը-ձարել:

Մարգարիտ.—(կողմը) գլխի տակը փափուկ բարձ դրէք, խարեւանենք:

Պատրիկ.—Պ. Սմբատ, վերջացրէք, գործ ունիմ: (Եւ պահարանից մուրհախները հանելով զնում է սեղանի վրայ):

Սմբատ.—Պ. Օհանէս, համեցէք մուրհակները ստորագրել:

Օհանես.—Մարգարիտ օգնիք վեր կենամ: (Մարգարիտը օդնելով նստում է Օհանէսը, իսկ Մարգարիտը, յետեւից պահելով) մրտեղ ստորագրեմ:

Պատրիկ.—Ահա այստեղ (ցոյց տալով):

Օհանես.—Այստեղ (գորդողալով ստորագրում է, եւ յետոյ պառկում Մարգարիտ օգնութեամբ, մուրհախները Սմբատը վերցնելով, գրանն է զնում):

Պատրիկ. } (վեր կինալով) Մնացէք բարե, Ասմբատ. } տուած առողջութիւն տայ:

Պատրիկ.—Պ. Օհանէս, սիրոտ շատ մի նեղացրէք, Աստուած մեծ է:

Օհանես.—Գնացէք բարե, շնորհակալ եմ: (Պատրիկը եւ Սմբատը զնում են. Մարգարիտը նրանց յատեւից դուռը ամուր խփում):

Մարգարիտ.—(բարկացած) Վերջապէս խարեւայութեամբ առաք մուրհակը. գնացէք, Տէր ընդձեզ, միմիայն ունեցէք խիղճ, երախտիք, սէր:

Ա Ր Ա Բ Ո Ւ Ա Ծ III.

Տեսիլ I.

(Օհանեսը մեռել է, Մարգարիտը սզի զգեստը հազած, նսած սեղանի մօս, արորի վրայ ժխուր խօսում է):

Մարգարիտ.—(հոգոց հանկով) Ա՛յս վերջապէս մեռար, սրտիդ ուխտը կատարելով, մեռար հանգիստ, բայց ինձ թողիր կրակի մէջ։ Զը գիտեմ, որի՞ հոգսը քաշեմ, աղքատութեան, Սամսոնիս, թէ որբերի։ Մինչև քո մահդ, հոգս էի քաշում, միայն քո և Մուխտը վարմունքի համար, երբ որ դու մեռար, մեռաւ և նախկին հոգսերս, առաջացան նոր, աւելի մեծ և դժուար հոգսեր։ Այժմ զգում եմ, որ ես չքաւոր եմ։ Ո՛հ, չլինէիր հարուստ, չմեռնէիր աղքատ։ Իինէիր աղքատ, մեռնէիր աղքատ։ Փող, փող, ինչ զօրութեան տէր ես դու։ Դու ես պատիւ, դու ես փառք մարդուս համար։ Գնա, հեռացիր անգութ փող, դու նմանում ես մի վնասակար զազանի, դու եղար իմ ամուսնու մահուան պատճառը, դու եթէ առաջուց չլինէիր նրա մօտ, հիմայ նա կենդանի էր։ Մարդուս պատուից ընկնելու պատճառը դու եղար, խոռվութիւնների պատճառը դու եղար, հիւանդութեան պատճառը դու եղար, դու եղար

նաև մահուան պատճառը, ապա ես քո ինչդ գովեմ, քեզանից ես ինչ օգուտ տեսայ, բացի վնասից։ Գնա Մուխտը և Սաղայէլի մօտ, որոնք քեզ պաշտում են, առաւել են համարում իրանց որդկերանցից։ Ե՛հ էլ ինչ երկարացնեմ, ես քեզանից մի խօսքով օգուտ չը տեսայ։ (մի փոքր լուսնինից յիտոյ) Տեսնես ինչպէս եղաւ մեր տների վաճառախոսութիւնը, որքանի ծախուեց, անրախտ որդի, հիմայ ինչ գրութեան մէջ ես։ Յ տարի օտարութիւն կրելուց յիտոյ չկարողացար արժանանալ հօրդ տեսութեան, այլ արժանացար տներըդ ծախելուն։ Խեղճ տպայ, քուանամ ես (լացում է), ժեր է հօրդ հարստութիւնը, գնացիր օտար երկիրներ թափառեցիր, իսկ հօրդ կարողութիւնը սա և նա կերաւ։ (արտասուք սրբելով) Բայց ես մի կողմից նրանով եմ մսիթարւում, որ հայրական փող չէ մնացել։ Ողորմի քեզ, ամուսին, շնորհակալ եմ քեզանից, որ փող չը թողիր, թէ չէ իմ տղերքս էլ ուրիշների նման պիտի փչանային։ Թող աշխատեն, ճակատի քրտինքով հաց ուտեն, հայրական փողը որդու համար ցեց է, մինչև որ չէ փչացնում վերջի կողմէկը, չէ հանգստանում։ Թող հեռու կորչէ այդ ցեցը իմ որդուցս։ Ուշացաւ որդիս, դուրս գնամ, դուցէ մարդ պատահի, հարցնեմ, վաճառախոսութեան համար։ (դուրս է գնում) միւս դոնից ներս է մտնուն Սամսոնը փոքր բարկացած եւ փրդոված։ զալով նստում է աթոռի վրայ եւ փոքր լուսնինից յիտոյ խօսում է մեղմ ձայնով)։

Տեսիլ II.

Սամսոն.—Օ՛ք. հանգիստ եմ զգում ինձ, չը

կան այն գարշելի դեերը, որոնք $\frac{1}{2}$ ժամ սրանից
առաջ մօտս կանգնած էին: Նրանց համար պատ-
մում էր իմ մայրս, չէի հաւատում և մինչև ան-
գամ ստում էի, բայց այսօր արդէն տեսայ աշ-
քովս. իսկապէս անամօթ մարդիկ. խեղճ հայր,
արդեօք ինչպէս էիր վարվում դրանց հետ. հի-
մայ մտնում եմ քո առաջուայ դրութեան մէջ: Ո-
ղորմածդ մի խեղճ, միամիտ և բարի մարդ էիր,
և սատանայական շրջանը քեզ յաջողացրել է որ-
սալ. շնորհակալ եմ քեզանից, որ կարողացել ես
դուրս պրճնել այդ շրջանից, տալով մուրհակ մի-
միայն 2500 մ. այլ ոչ թէ 4000 մ. կամ աւելի:
Կարծում էի մուրհակ տալը յիմարութիւն ես ա-
րել, բայց ոչ, չարաչար սխալում եմ, և ներո-
ղութիւն եմ խնդրում քեզանից, ով հայր, երբէք
չեմ կարող մեղագրել քեզ, որովհետև այսօր տե-
սայ: Սկզբից վաճառական էիր մաքուր, աղնիւ և
անկեղծ. միակ անհատ էիր քաղաքում և այդ-
պիսի մի վաճառական գործ ունենայ կեղծ և կեղ-
տոտ վաճառականների հետ, արդեօք ինչ վիճա-
կի և կամ ինչ դրութեան պիտի հասնի. և ահա
տեսար այն վիճակը, որից յետոյ մեռար հանդիսաւ:
Քաղաքիս վաճառականութիւնը ահա այսպիսի
դեր են խաղում, եթէ որևից մի վաճառական չէ
անքախտանում, իսկոյն և ետ հաւաքում են չորս
կողմից, աշխատելով վերջնական ամրախտութիւ-
նը հաստատել, փոխանակ օգնութեան հասնելը. և
հէսց դրա համար էլ տեղումս վաճառականութիւ-
նը օրէց օր մեռնում է, փոխանակ զարգանալու:
(Ներս է մտնում Մարգարիտը):

Տեսիլ III.

Մարգարիտ. — (կողմը) Երեկի վաճառախօսու-
թիւնը անյաջող է անցել: (դէպի Սամսոնը) Ի՞նչպէս
վերջացաւ մեր գործը:

Սամսոն. — Միթէ դու չը գիտես, ի՞նչպէս
պիտի վերջանար:

Մարգարիտ. — Երեկի անյաջող է:

Սամսոն. — Ծախուեց 2785 մ.

Մարգարիտ. — Օֆ, անխիղճներ, յարմարեցրել
են մեր պարտքին:

Սամսոն. — Այն մեր պարտքի դիմաց. և ու-
րեշ ինչ էիր սպասում. դիմացդ հազար ու մի
բարի և կեղծ խորհուրդներ էին տալիս միմթա-
րական, բայց դու նայիր յետեկցդ, ինչեր էին
ծրագրել և իսկապէս իրագործեցին:

Մարգարիտ. — Ի՞նչպէս:

Սամսոն. — Վաճառախօսութիւնից առաջ ինձ
միմթարում էին ամենայն կողմից, թէ գինը կը
բարձրացնենք մինչև 3500 մ. բայց ծախուելու
ժամանակ միմիայն 2 անգամ աւելացրին և վեր-
ը կանգ առեց Մուխսու վրայ: Մի ուրիշ աղբիւ-
րից իմացայ, որ վաճառախօսութիւնից առաջ ար-
դէն քաղաքիս հարուստները Մուխսու ներկայու-
թեամբ վճռել էին, բարձրացնել այնքան, որքան
պարտք ենք և թողնել Մուխսու վրայ, այդպէս էլ
արեցին: Այստեղ հարուստներից ոչ ոք չկար
բացի Մուխսուց և 2 մարդուց, և ահա այստեղ
էլ շահեցին Մուխսուն:

Մարգարիտ. — Պետքուը, վահանը, Աբգարը
այնտեղ չէին:

Սամսոն.—Ո՞չ, ոչ, ոչ մէկը:

Մարգարիտ.—Զէս որ Արգարը սրանից 5 օր առաջ ինձ հաւատացնում էր, թէ անպատճառ մինչև 3500 մ. կբարձրացնեմ. և ստիպում էր առանց վաճառախօսութեան ծախել իրան 3500 մ. մըթէ խարում էր ինձ:

Սամսոն.—Թոյլ տուր, մայր, մի հաւատար, դրանք բոլորը կեղծաւորութիւններ էին, և լոկ աւետարաններ էին կարգումքո զլիխն, վերջապէս Մուխսուն չեն թողնիլ, և մեղ օգնեն:

Մարգարիտ.—Ոհ, անխիզներ, ամուսնուս խարեցիք, բաւական չէր, և հիմայ մեղ էք սկսել ձնշել, կորէք հեռու... (ուշաթափում է):

Սամսոն.—(մօտենում, բռնում է) Մայր իմ, հանգիստ եղիր, Վարդուհի, Վարդուհի (կանչում է):

Մարգարիտ.—Օ՛ֆ... (ներս է մոնում Վարդուհին):

Տեսիլ IV.

Նոյնը և Վարդուհին.

Վարդուհի.—Ի՞նչ է պատահել:

Սամսոն.—Վարդուհի օգնիր ինձ, մօրս միւս սեհակը տանենք, թող հանգստահայ: (երկու կողմից բռնելով դուրս են տանում):

Տեսիլ V.

(Մուխսին եւ Սադայէլը միասին ներս են մտնում միւս դմուից, Մուխսին առաջ է, իսկ Սադայէլը նրա ետեւից ծիծաղելով):

Սադայէլ.—Հա հա հա, փողերս կորան, փո-

ղերս, յիշնւմ ես, Մուխսի, ինձ վրայ էիր բարկանում, քիչ էր մնացել ծեծէիր. (շարունակում է ծիծաղը) հա հա հա (մօտենալով) տօ քանի իմ քեալշէս սազ է, քո կոպէկը չի կորչի, խելքդ ժրտեղ է: (նաուս են) Ամի, Օհանէսից փող առնելը կարծես ջուր խմել լինէր ինձ համար: Ես այդպիսի տեղից եմ փող դուրս բերել. չես մտարերում, մի անգամ խանութը մի գիւղացի մուշտարի եկաւ Յարշին չիթ ուղեց, էնպէս ճարպիկ չափեցի, որ Յարշինի տեղ 2 արշին դուրս բերի և մէկին երկու էլ հաշուեցի, հա, հա, հա, (ծիծաղ) չես յիշում սուրանից 10 օր առաջ, խանութը մի նոր, չգիտեմ որտեղից, մուշտարի եկաւ, մահուզի տեղ կէս մահուզ ծախեցի, և փողն էլ մահուզի հաշուով առայ: Միթէ չես յիշում, էն գիւղացուն, որ դու ուղարկել էիր, 20 տարուայ մուկը կերած չիթ ծախեցի և մէկին երկու գին հաշուեցի, բանն այն չէ, հարցնում է թէ, ինչու է այդպէս չիթը տրուուել, պատասխանում եմ թէ ճանապարհին է եղել, այնինչ մուկն է ծամել, հա հա հա (ծիծաղ) (միասին) մէկն է, երկուսն է, երեքն է, որը ասեմ, որը թողնեմ, հա հա հա: (ծիծաղ).

Մուխսի.—Հէնց զրա համար էլ, ես բեզ Սմբատիցս առաւել եմ սիրում, դու որ ըլ լինէիր, ես կորած էի, (կամաց) բայց մի բան էլ կայ, Սադայէլ, զլտես, ես Սամսոնից վախենում եմ, աշքիս ճարպիկ տղայ է երկում:

Սադ.՝ Ի՞նչպէս:

Մուխսի.՝ Ահա այսպէս, Սամսոնը մեզանից ձեռք չի վերցնելու, նա անպատճառ մի քանի վաճառախանների ներկայութեամբ մեզնից հաշիւ է պահանջելու, և մենք ինչպիսի հաշիւ պիտի

ներկայացնենք, որ չը խայտառակուենք: Եթէ մեր
վերջին հաշիւը ներկայացնենք, անյարձար է, իսկ
եթէ ամենեին չը ներկայացնենք, էլի չի լինի,
ապա ի՞նչպէս անենք, որ չխայտառակուենք:

Սադ.—Նա պաշտօնապէս մեղանից հաշիւ չէ
կարող պահանջել, իսկ եթէ մասնաւոր կերպով
պահանջէ, մեր հաշիւը կներկայացնենք:

Սուլիսի. —Ի՞նչպէս կարող ենք, մեր հաշիւը
ներկայացնել, քանի, որ նա կարող է ունենալ
իւր ձեռքում հօրից մնացած հաշիւը, որը երբէք
չի համապատասխանել մեր հաշուին, և այն ժա-
մանակ պիտի գետինը մտնենք:

Սադ. —Ամի, ես երաշխաւուրում եմ որ նրա
հօրից հաշիւ չկայ մնացած:

Սուլիսի. —Ո՞րտեղից գիտես:

Սադայէլ. —Հաստատ գիտեմ, որ նա միայն
ըեղ էր հաւատացած:

Սուլիսի. —Այն, այդ էլ ճիշտ է, որ նա ի՞նձ
էր հաւատում միայն...

Սադայէլ. —Ամի, վերջապէս վաճառական-
ները մեզ թողած, խօմ նրան չե՞ն պաշտպանելու,
մեզ թողած խօմ նրան չե՞ն հաւատալու:

Սուլիսի. —Հասկանում եմ, բայց...

Սադայէլ. —Միթէ դու այսօր չը տեսամը նը-
րանք ինչպէս իրանց խօսքը կատարեցին և ոչ
մէկը վաճառախօսութեանը ներկայ չէին գտնուում.
ախպէր, ես նրանցից շնորհակալ եմ. նրանք մեզ
այսօր մեծ օգուտ տուին:

Սուլիսի. —Դրա դէմ ոչինչ չունիմ, վախե-
նում եմ, Սադայէլ...

Սադայէլ. —Հակառակ դէպքում, Ամի, դու
հաշւի ժամանակ ասա, թէ ես այդ գործի վերա-

բերեալ ոչինչ չգիտեմ, այլ յանձնել եմ Սադա-
յէլին: Այն ժամանակ դու մի կողմը քաշուիր, ես
գիտեմ նրանց ինչպէս կպատասխանեմ: Նրանք
մինչև այժմս ինձ չեն ճանաչել, ես Սադայէլն
եմ. եթէ 20 վաճառական էլ հաւաքւի, գարձեալ
ինձ հետ չեն կարողանայ խօսել (կանգնելով սկսում
է պտուտ գալ):

Սուլիսի. —(կողմը) Էդ հունարը, որ քո մէջդ
եմ տեսնում, 20 չէ 100 էլ հաւաքւուեն, քեզ հետ
չեն կարող խօսել: Սադայէլ, քո արել վկայ, հէնց
այդ վերջին խօսքերիդ վրայ ես հանգստացայ և
հիմա արդէն այնպէս եմ զգում, որ կարծես հա-
շիւը խաղաղութեամբ վերջացել է:

Սադ. —Այնպիսի մի հաշիւ ներկայացնեմ ես
նրանց, որ մի բան էլ պարտական մնան:

Սուլիսի. —(կողմը) Կարծես պրօֆեսօր լինի,
զարմանում եմ, առանց ուսում առնելու այդ գի-
տութիւնը ունենալ, ախպէր, շատ դժուար է,
Սմբատս 10 տարի կարդաց, գլխումը Յ կոպէկի
խելք չը կայ, (Սադայէլին) շատ ապրիս, Սադայէլ,
լաւ մտածիր, ինձ վերջի փորձանքից էլ ազատի,
էլ հոգ չեմ ունենալ:

Սադ. —Միամիտ եղիր, Ամի, դու դրա հա-
մար երբէք չմտածես:

Սուլիսի. —Դու գիտես, Սադայէլ. այնպիսի
միջոցներ ձեռք առ, որ չխայտառակուենք.
(Յակոն ներս է մտնում շտապ):

Տեսիլ VI.

Նոյնը և Յակոն.

Յակոն. —Աղա դուքանը մուշտարի է եկել,

քեզ է հարցնում:

Մոլխափ.—Շտապիր, Սաղայէլ, գնանք, ապաթէս, ձեռքից կը գնայ (շտապ 3-ով դուրս են դնում):

Տեսիլ Ⅳ.

(Միւս դանից ներս են մտնում Սամսոնը և Մարգարիտը. Մարգարիտը առաջ է):

Մարգարիտ.—Անբաւական եղաք, անխիղճներ, չարչարեցիք իմ ամուսնուս, հիմա նոյն օյինը մեզ հետ էք խաղում, մի՞թէ խիղճ չունիք, չէք խնայում մնացած որբերին (նստում են):

Սամսոն.—Հանդիսաւ եղիր, մայր, Աստուածմնձ է, միխթարուիր ինձանով, քո միակ միխթարիչը եմ ես. քաղցած չենք մեռնիլ, մենք ենք փող աշխատում, ոչ փողը մեզ: (սկսում է նամակներ գրել):

Մարգարիտ.—Ի՞նչ արիր, որդի, 600 մ. համար, դրա մասին Մուխսու հետ խօսեցիր:

Սամսոն.—Մի քանի անգամ Մուխսուն ասեցի, սկսեց կմկմալ, որոշ պատասխան չը տուեց, ուստի դրա համար նամակներով հրաւիրում եմ այստեղ Մուխսուն, Սաղայէլին իրանց հաշիներով և մի քանի վաճառականների. այսօր պիտի վերջացնեմ մեր բոլոր հաշիւը նրանց հետ և կը տրեմ յարաբերութիւններս. այնուհետև սկսենք մեր ապագայի մասին մտածել, բաւական է, որքան տամնջուեցանք:

Մարգարիտ.—Որդի, մի քանի կողմանակի մարդիք էլ հրաւիրի, ինչ ես խաչագողներին այս տեղ հաւաքում:

Սամսոն.—Միւնոյն են, մայր, ոչ մէկին լաւ ասել չէ կարելի:

Մարգարիտ.—Գիտես, որդի, դու պիտի հոգասմեզ համար, ուրիշ ոչ ոք չունիմ: (ներս է մտնում Թափայէլը եւ զրերի պայուսակը թեւի տակից սեղանի վրայ դնում)

Տեսիլ Ⅴ.

Թափայէլ.—Մայրիկ, այսօր տեսուչը ինձ ասեց, որ եթէ վաղը թօշակը չը տանեմ, ուսումնարան չը պէտք է թողնէ, մայրիկ, վաղը կը տաս տանեմ (տիրեկով), թէ չէ ուսումնարան չեն թողնիլ և դասերից յետ կը մնամ:

Մարգարիտ.—(միխթարական) Մի տիրիր, որդի, վաղը անպատճառ կը տամ թօշակու կը տանես:

Սամսոն.—Թափայէլ, միամիտ կաց, վաղը կը տանես, բայց ես բեզ մի տեղ եմ ուղարկում, շուտ գնա և պատասխան բեր. (տարով 5 ծրար) առ այս ծրանները, զրանցից մէկը կը տաս Մուխսուն, միւսը Սաղայէլին, երրորդը Պետրոսին, չորրորդը Վահանին և հինգերորդը Արգարին, այնքան կըս պասես, մինչեւ, որ պատասխանները գրեն, և շուտ ինձ բեր:

Թափայէլ.—Հասցէները գրել ես:

Սամսոն.—Այո, գրել եմ:

Թափայէլ.—Ուրեմն հասցէների համաձայն կը բաժանեմ և կը խոդրեմ պատասխանը գրեն. իսկ եթէ չըպատասխանեցին, այն ժամանակ ի՞նչ անեմ:

Սամսոն.—Կը պատասխանեն, դու միայն շուտ դնամ:

Թափայել.—Շատ լաւ, (զնում է):
Մարգարիս.—Սամսոն, այդպէս որ հրաւի-
րում ես, արդեօք կը գան:

Սամսոն.—Զեն կարող չը գալ, մայրիկ, որով-
հետև ահա այս երրորդ անգամն է որ ես դրանց
հրաւիրում եմ. առաջին, երկրորդ անգամը մեր-
ժեցին, իսկ երրորդ անգամը չեն կարող մերժել:
(ներս է մտնում Վարդուհին):

Տեսիլ IX.

Նոյնք և Վարդուհին.

Վարդուհի.—Սամսոն, քեզ մի մարդ է հարց-
նում:

Սամսոն.—Ո՞վ է:

Վարդուհի.—Չը գիտեմ:

Սամսոն.—Ասա թող ներս գայ: (Վարդուհին
դուրս է զնում):

Մարգարիս.—Ով պիտի լինի: (ներս է մտնում
Խաչատուրը):

Տեսիլ X.

Խաչատուր.—Բարե ձեզ (բարեւում են):

Սամսոն.—(կանգնելով) Բարե, համեցէք, նըս-
տէք (նստում է). դժւք էիք ինձ հարցնողը, պ. Խա-
չատուր:

Խաչատուր.—Այո, պ. Սամսոն. ներողութիւն,
անհանգստացրի ձեզ:

Սամսոն.—Ոչինչ, եթէ խօսք ունէք, համեցէք:

Խաչատուր.—Ողորմած Օհանէսը ինձ 25 մ.

փող է տալու, խնդրում եմ եթէ կարելի է վճա-
րէք, հարկաւոր է:

Սամսոն.—Ներողութիւն, այդ ինչ հաշիւ է:
Խաչատուր.—3 տարի սրանից առաջ խա-
նութից ապրանք է վեցցրել:

Սամսոն.—Ինչիք համար մինչև հիմայ լոել
էիք, և ինչու իրանից չէիք ուզում:

Խաչատուր.—Զէի համարձակւում ուզել:

Սամսոն.—Նրանից չէիք համարձակւում ու-
զել, ապա ինձանից ինչպէս էք համարձակւում
պահանջել:

Խաչատուր.—Որովհետև տների մի մասը ծա-
խեցիք, արդէն հիմայ փող կունենաք:

Սամսոն.—Պ. Խաչատուր, ճիշտ է ծախուել
է, բայց Մուխսու հետ զեռ հաշիւներս չենք մար-
րել, մաքրելուց յետոյ, միամիտ եղէք, կը վճարեմ:

Խաչատուր.—Այդ ուշ կը տեչ, եթէ կարելի
է հիմայ տուէք:

Սամսոն.—Հիմայ փող չունեմ:

Խաչատուր.—Եթէ հիմայ չըտաք, ես գանգատ
կանեմ:

Սամսոն.—Համեցէք, ճանապարհով բաց է:

Մարգարիս.—Պ. Խաչատուր, դուք որ խա-
նութ ունիք և առևտուր էք անում, այդ ումից էք
ձեռք բերել. չէ՞ որ 15 տարի սրանից առաջ մեր
գործակատարն էիր. միթէ հարստանալով պիտի
խիղճը կորցնէք. չէ՞ որ իմ ամուսնու փողով և
օգնութեամբ ես հարստացել: Այն ժամանակ, երբ
ըստ աներգ ամուսնուս փողերը գողացաւ, չէ՞ որ
միենոյն ժամանակը քո խանութում գտնւում էք
մեր ապրանքը և դու էլ միւս կողմից սեփհակա-
նացրիր այն ապրանքը: Գոնէ լոէք, ամաչէք,

հանգիստ թողէք մեղ (Խաչատրուրը վեր է կենում):

Խաչատրուր.—Մնացէք բարեկաւ(դուրս է գնում):
Մարգարիս.—Վարդում են, բաղաքավարի չէ
լինում. (դէպի Խաչատրուրը) քեզ ասացինք, որ համ-
բերիր, հաշիւը մաքրելուց յետոյ փողդ կտունաս,
չեմ համբերում և այս բողէիս պիտի տաս: Դէն
նրան հաւատացրու, որ փող չը կայ, (ներս է
մտնում Ռափայէլը ծ ծրար ձեռքին):

Տեսիլ X.

Ռափայէլ.—(ծրարները Սամսոնին տալով) Առ,
սրանք քո նամակներիդ պատասխաններն են:

Սամսոն.—Նատ ապրիս, բոլորը գալու են:

Ռափ.—Այս. (դէպի մօրը) մայրիկ, ծրարը որ
չը տուեցի Սադայէլին, այնպէս սկսեց դողալ,
հէնց իւացայ խելագար է. մայրիկ, Սադայէլը
ինչու է այնպէս դողում:

Մարգարիս.—Զը գիտեմ, որդի:

Ռափ.—Իսկ Մուխսոն, մայրիկ, ծրարը տա-
լուց սկսեց լեզուն ծամծմել. և ասեց, էս ինչի
բալաս:

Սամսոն.—Դէն, շատ մի խօսիր, գնա խաղա:
(Ռափայէլը գուրս է գնում):

Մարգարիս.—(նրա յետելից) Հէնց նրա բալաս,
բալասը հօրդ այս զրութեանը հասցեց է: (ներս է
մտնում Վարդուհին):

Տեսիլ XI.

Վարդուհի.—Սամսոն, քեզ գատարանում կան-
չում են:

Սամսոն.—(կանգնելով) Այս բողէիս կը գնամ.
(գնում է):

Մարգարիս.—Որդի, մի ուշացիր, շուտ եկ,
գուցէ գալիս են: (նրա յետելից):

Սամսոն.—Շատ լաւ:

Մարգարիս.—Օ՞ք, արդեօք երբ կը լինէ, այս
ծանր լծի տակից գուրս գանք. լսեղ Սամսոնս
շշմել է, չը գիտէ, թէ ինչ անէ, կէս ժամ հան-
գստութիւն չունէ. Վարդուհի, սեղանի երեսը
մաքրէ, հիմայ հիւրեր են գալու:

Վարդուհի.—(սկսում է մաքրել) Բաջի, քանու
ծախուեցին տները:

Մարգարիս.—Ե՞ն, մի հարցնիր, Վարդուհի:

Վարդուհի.—Ինչու համար:

Մարգարիս.—Մեր քաղաքի վաճառականները
ծախուելու ժամանակ խօսքերնին մէկ էին արել,
չէին բարձրացրել, թողէլ էին Մուխսու վրայ
2785 մ.:

Վարդուհի.—Ավսոն, հազար ավսոն...

Մարգարիս.—Հոգ չէ, Վարդուհի, նրանք մեզ
հետ որ այգէս վարդեցին, իրանց պատիւը չը
պահեցին, ես էլ այսուհետեւ չը պիտի մտածեմ:
Թող տանէ Մուխսին, հանգստանայ՝ տեսնենք,
արդեօք մեղանից ձեռք կը վերցնէ:

Վարդուհի.—Ապա ինչ պիտի անէ, նրանք
իրանցը արդէն շահեցին, ձեղանից կողովտելով ի-
րանց գրպանը գրին: Բաջի, հիմայ Սադայէլի ու-
րախութեանը չափ չը կայ, ձեռքերի հետ հիմայ
զլուխն էլ է սկսել դողալ. մի տարրուայ տան
ծախը ձեղանից գուրս բերեց. բաջի, հաւատաց-
նում եմ, եթէ իմ ձեռքս էլ այգքան մուֆտայ փող
գայ, ամբողջ մարմինս կը դողայ:

Մարգարիս. — Ե՞ն, Վարդուհի, դրանցից առաւել փողեր են տեսել. քեզ յայտնի է, Աստուած միծ է, փողի համար այլ ևս հոգ չեմ անում, իմ որդիքս լաւ լինեն, ինձ համար շատ միծ փող են այնպիսի փողերը եկող և գնացողներ են, Մուլս սին և Սադայէլը այն փողը չեն կարող ուտել. 5 որբի փողը միթէ ուտել կը լինի: Միթէ մարդ կարող է գուշակել իւր վերջը. մեզնից գողացած փողը Մուլսու միայն մի որդուն Մուլւայ գնաւ համար չի բաւականանայ, ի հարկէ այնպիսի շոայլ ծախքերը Մուլսին մեզպէսներից պիտի դուրս բերէ:

Վարդուհի. — Բաջի, նրա մեծ որդին, Սմբատը խելագար է. չես յիշում հերու իւր աներոջը փողոցի մէջը ծեծեց և իւր կնոջը ամեն օր ստիպում է հայրական մասը պահանջել:

Մարգարիս. — Ի՞նչպէս չեմ յիշում, միթէ այդպիսի բանը կարելի է մոռանալ:

Վարդուհի. — Բաջի, բայց Սմբատի կինը մի լաւ կնիկ է. նրան էլ գուր չի գալիս իւր ամուսնու վարը, վերջերս նա թոյն խմեց, որ մեռնի, բայց շուտ իմացան, բժիշկ բերեցին և մի կերպ լաւացըին: Մուլսու կինը — Անթառամը ամօթից մարդու հետ չէ ուղում խօսել:

Մարգարիս. — Ուրեմն, դու դոցա հոգի ես կարծում:

Վարդուհի. — Բաջի, ես հաւատացած եմ, որ ձեզ զրկողը մեծ մասամբ Սադայէլն է եղել:

Մարգարիս. — Պարզ յայտնի է, Վարդուհի, և հենց դրա համար էլ Սադայէլ անունն է կրում: (Ներս է մտնում Սամսոնը բարկացած):

Տեսիլ XII.

Սամսոն. — (ինքն իրան) Ախպէր, ամենայն կողմից խեղդում են. (նստում է):

Մարգարիս. — Որդի, ինչո՞ւ համար էին քեզ դատարան կանչել:

Սամսոն. — Ահա այն մարդն է սկսել մեզ խեղդել, որը 10 տարի շարունակ մեր տան հացովն է ապրել:

Մարգարիս. — Ի՞նչ է պատահել:

Սամսոն. — Այնպէս է կարծում, եթէ գանգատուում է, իսկոյն փողը կըստանայ: Դէս գնա, հիմայ 10 տարի սպասէ, որ փողդ պիտի ստանաս:

Մարգարիս. — Դա ո՞վ է:

Սամսոն. — Պ. Յղարը:

Մարգարիս. — Ի՞նչո՞ւ համար էր գանգատուում, չէ՞ որ մեզ զիմեց, մենք ասեցինք, որ չգանգատուես. մի քանի օրից յետոյ կը տանը:

Սամսոն. — Երկի մեզ հաւատ չէ ընծայել:

Մարգարիս. — Ի՞նչո՞ւ պիտի մեզ չը հաւատար, քանի որ հազարներ պարտ չենք նրան. նրա պահանջն է մեզանից 50 մ. (այդ միջոցին ուղի ծայներ են զալիս):

Սամսոն. — (կանգնելով) Ահա գալիս են. (ներս են մտնում Պետրոսը, Վահանը եւ Աբգարը):

Տեսիլ XIII.

Պետրոս.

Վահան. } Բարե ձեզ:

Աբգար. }

Սամսոն. — (առաջանալով) Բարե, համեցէք (բա-

թեւում է Մարգարիտի հետ) (Վարդուհին դուրս է գնում) նստէք: (Նստում են):

Պետրոս.—Ի՞նչպէս էք, պ. Սամսոն, լմւ էք:

Սամսոն.—Փառք Աստծոյ, լաւ ենք:

Պետրոս.—Առ այժմս անդրծ էք, չը:

Սամսոն.—Այն, պ. Պետրոս, առաջժմս անդրծ եմ. աշխատում եմ, որքան կարելի է շուտ մեր հաշիւները մաքրել:

Աբգար.—Իսկ յետոյ ինչ գործով պիտի պարապէք:

Սամ.—Մուխսին 600 մ. փող է մեզ պարտ, եթէ այդ գումարը ստացայ, խօմ քաղաքում մի փոքր գործ կը սկսեմ, հակառակ դէպքում ստիպուած Ռուսաստան պիտի գնամ ծառայելու, ընտանիքս պահելու համար:

Վահան.—Աշխատէք, պ. Սամսոն, տեղումս գործ սկսել, մի հեռացէք այսոեղից, մայրդ խեղճ է, մենակ է:

Սամսոն.—Պ. Վահան, ես էլ եմ ցանկանում այստեղ մնալ, բայց քաղաքումս այնպիսի մի գործ չկայ:

Վահան.—Ճիշտ է:

Պետրոս.—Պ. Սամսոն, աշխատէք մի կերպ:

Սամսոն.—Ի հարկէ, ճարահատեալ պիտի մնամ, չեմ կարող հեռանալ:

Աբգար.—Մի կերպ կառավարուէք ինչ անենք, հօրդ սիսալմունքն է:

Սամսոն.—Պարոններ, իզուր էք իմ հօրս մեղադրում, երևակայէք, ինչ դրութեան մէջ պիտի լինէք այն հարուստ վաճառականը, որը 10 տարի առաջ տաննեակ հազարներ ունէք, և վերջին անդամ Մոսկուայից վերադառնալով, միմիայն հազար-

ներով պարտ տեսնէք. միթէ նա չի գտուիլ, չի հիւանդանալ և մինչև անդամ իմ կարծիքով կարող է մահանալ, վերցրէք օրինակ իմ հօրս, որի հետ նոյն դերը խաղացին անխիդաները. գողանում էին, գոնէ պարտք էլ չթողնէին: Ողորմածիկը միանգամայն շահեց: Նրանից յետոյ քանի անգամ դատարան կանչեցին: Այս ինչ է, Բարանովս է է գանգատառել, փող է պահանջում միւսն է գանգատառել և այն: Վերջապէս յայտնում եմ խորին շնորհակալութիւնս Մոսկուայի վաճառականներին. եթէ նրանք զիջում չանէին հիմայ մենք կորած էինք: Պ. Բարանովին պարտ էր 5000 մ., նա բաւականացաւ 500 մանէթով, մտնելով մեր վիճակի մէջ. նոյն զիջումներ արեցին և ուրիշ վաճառականները: Իսկ մեր քաղաքում պ. Նիկալէն 100 մ. համար քիչ էր մնում տները ծախէ, առանց մեզ յայտելու. եթէ մի փոքր ուշ իմանայինք, անխիդանը արգէն հիմայ ծախած էր: Նրանից մեծ դերը ահա արգէն Մուխսին խաղաց մեր զլիսին: Միթէ Բարանովսէրը միայն պիտի լինեն անկեղծ, ազնիւ և բարի մարդիք. և ահա Խաչատուրովսէրը, Մուխսինները քանդեցին իմ հօրս տունը և աղքատութեան մէջ զցեցին: Ողորմածը ճշմարիտ և բարի մարդ էր, դուր չեկաւ նրան այն վարքերը, սկսեց մտածել բարկացաւ և 8 տարի տանջուելուց յետոյ մեռաւ, և դուք վաճառականներդ փոխանակ արդարութիւնը պաշտպանելու, ծոյլ էիք համարում նրան և ստիպում էր 60 տարեկան ծերունուն գնալ և ամիսը 10 մ. ծառայել:

Պետրոս.—Ներողութիւն, պ. Սամսոն, մենք նրան երէք չենք ստիպել գնալ ծառայել, մենք նրա միշտ լաւն ենք կամեցել:

Սամսոն.—Համակրում եմ ձեր խօսքին, բայց
եթէ դուք արդարութիւնը պաշտպանէիք, իմ հայ-
րըս ներկայ դրութեան չէք հասնիլ:

Պետրոս.—Ի հարկէ, ճշմարիտ է, եթէ նրան
օգնութիւն հասնէր, նա չէք աղքատ, ու և իւր
առեւտուրը կը շարունակէր:

Աբգար.—Թողէք, դրանք անցած բաներ են.
Խօսէք ներկայիցս. (Ներս է մտնում Մուխսին, նրա
յիսեւից Սաղայէլը մի.քանի զրբեր թեւի տակ):

Տեսիլ XIII.

Մուխսի. և Սադ.—(միասին) Բարեւ ձեզ (բա-
րեւում են ուղրի հետ):

Ս ա մ ս ո ն .—Համեցէք, նստէք. (աթոռներ տալով,
նրանք Դ ե ն):

Սադ.—(բոլորին) Ներողութիւն, ուշացանք:

Սամսոն.—Ոչինչ, պ. Սաղայէլ:

Մուխս.—(բոլորին) Վաղուց էինչ հաւաքուել էք:

Պետրոս.—Կը լինի $\frac{1}{2}$ ժամ:

Մուխս.—(Սաղայէլին) Բաւականի ուշացել ենք:

Սադ.—Ամի, ինչ անենք, հազիւ կարողացայ
գործս վերջացնել:

Աբգար.—Հանգիստ եղէք, Մուխսի, հող չէ:

Սադ.—Պ. Սամսոն, իսկ դուք ձեր հաշիւը
պատրաստել էք:

Սամսոն.—Ի՞նչ հաշիւ, պ. Սաղայէլ:

Սադ.—Դուք հայրական մնացած հացիւ չունիք:

Սամսոն.—Ողորմածիկը ոչինչ չէ թողել, նա

միայն Մուխսուն էր հաւատացել:

Մուխսի. —Ի հարկէ, այդպէս է, մենք հօ նը-

րանից աւել փող չենք պահանջելու:

Սադ.—(Մուխսուն կամաց) Քէֆդ լաւ պահիր,
գործերնիս յաջող է:

Պետրոս.—Պ. Սաղայէլ, դուք պ. Սամսոննաց
հաշիւը բացէք, այսօր մեր ներկայութեամբ պիտի
վերջանայ:

Վահան.—Անհրաժեշտ է վերջացնել:

Աբգար.—Անպատճառ հարկաւոր է, դրանք
էլ խեղճ են, ահա քանի ժամանակ է, որ պ. Սամ-
սոնը այդ դորձով է զրազուած. պիտի անպատ-
ճառ վերջ տալ:

Սամսոն.—Այս, այս, խնդրում եմ ձեզ:

Սադ.—Շատ ուրախ եմ. (զրերից մէկը վերց-
նելով բացում է Յանէսի հաշիւը և վստահ սեղանի վրայ
կնում). ահա, համեցէք, համաձայն սոյն հաշւին
ձեր պարտը է, պ. Սամսոն, 4500 մ., որից 2000 մ.
ստացուած է 6 տարի առաջ. իսկ 2500 մ. մուր-
հակ էինք առել, այն էլ ձեր աների մի մասը ծաշ-
խելով մեր պահանջը լցրեց: Հաշիւը պարզ է:
(Իաշիւը կարգում է Պետրոսը և հերթով կարգում են
մնացածը, հերթը Սամսոնին է հասնում, նա կարդալով
չուարած սեղանի վրայ է զնում):

Սամսոն.—Պ. Սաղայէլ հաշիւը այդպէս չէ,
զումարը այդքան չէ, քիչ պիտի լինի:

Սադ.—Ի՞նչ էք խօսում, պ. Սամսոն, միթէ
մինը սխալ հաշիւ կը ներկայացնենք:

Մուխս.—Բալաս, հօ Սաղայէլը ձեղ չի խարում:

Պետրոս.—Ոչ, Մուխսի, կարող է զումարնե-
րում սխալուել:

Մուխսի.—Եթէ ուրիշ մարդ գրած լինէր, կա-
րող էր սխալուել, բայց Սաղայէլը շատ զգոյշ է,
նա չի սխալուիլ:

Սամսոն.—Պ. Սաղայէլ, շատ կարելի է ար-

տագրելուց սխալուել էք:

Սադ.—Երբէք, այդպիսի բան չի կարող պատահել:

Սամսոն.—Միթէ, պ. Սադայէլ, մարդու չէ կառող սխալուել:

Սադ.—Պ. Սամսոն, մեր հաշիւը սխալ չէ.

Եթէ ձեզ հաշիւ ունիք, համեցէք:

Սամսոն.—(Գրպանից իր հօր թողած հաշիւը հանելվ դնում է սեղանի վրայ) Պ. Սադայէլ, ես ձեր հանուի մէջ մեծ սխալմունք եմ գտնում, իսկ դուք շուտ մէջ մեծ սխալմունք եմ գտնում, իսկ դուք պանդում էք, թէ ուղիղ է, (տալով) առէք, պ. Պետառու մեր և նրանց հաշիւը ստուգեցէք:

Պետրոս Վահան և Աբգար.—(Միասին, իրար մօտենալով, կամաց կարդում են երկու հաշիւը և իրար հետ համեմատում):

Պետրոս.—Պ. Սադայէլ, ձեր հաշուի մէջ սխալներ շատ կան:

Մուխափ.—Միթէ, Սադայէլ, կարող է պատահել:

Սադ.—Ամի, չեմ հաւատում. պ. Պետրոս, խնդրեմ եթէ կարելի է հաշիւը ինձ տուէք:

Պետրոս.—(Գերջացնելով կարդալը) Համեցէք (տալով է):

Սադ.—(Կարդում է, Գերջացնելով, սկսում է կարմրել եւ դողդողալ, կամաց դնում է սեղանի վրայ, խեղդուած ծայնով) Ամի, ես լաւ չկարողացայ ջոկել, դու կարդա, տես, (Մուխափն վերցնում եւ սկսում է կամաց կարդալ): Սադայէլ, (կողմը) լաւ խայտառակուեցինք: (Մուխափն հաշիւը Գերջացնելով դնում է սեղանի վրայ):

Պետրոս.—Մուխափ, այդ ի՞նչպիսի բան է. ձեր հաշիւներում մեծ սխալմունքներ կան:

Մուխափ.—Ես ոչինչ չգիտեմ, այդ հաշիւները յանձնել եմ Սադայէլին:

Աբգար.—Պ. Սադայէլ, ինդրում ենք բացաւրել, այդ ի՞նչ սխալմունքներ են. (Սադայէլը լուռ է.)

Վահան. —Պ. Սադայէլ, ինչու էք լուրել:

Սադ.—Ես... ոչինչ չգիտեմ...

Սամսոն. — (բարկացած) ի՞նչպիս ոչինչ չգիտէք.

Ի՞նչ էք խօսում (վերցնում է երկու հաշիւը), ահա երկու հաշիւ, մէկը ձերն է, իսկ միւսը մերը, որոնք զրուած են հայերէն լեզուով պարզ ու հասկանալի. Բայց ձեր հաշում սխալմունքներ և աւելնորդ գրուած գումարներ շատ կան. որ է (իրահաշիւ կարդում է). 1893 թ. յուլիսի 31-ին ձեր խանութից վերցրած է ապրանք, որի փողի գումարն է՝ 45 ր. 52 կ., իսկ դուք գրել էք 60 ր. 52 կ.: 1894 թ. հոկտեմբերի 24-ին ևս վերցրած է 18 ր. 13 կ. իսկ դուք գրել էք 28 մ. 13 կ.: Նոյն թուին մարտի 20-ին վերցրած է 16 մ. 75 կ., իսկ դուք գրել էք 26 ր. — 75 կրպ. (Սադայէլ եւ Մուխափն սկսում են կարմրել եւ իրար երեսի նայել) 1895 թ. յունիսի 21-ին ձեր խանութից վերցրած էր ապրանք՝ 50 ր., իսկ դուք գրել էք 80 մ. և այլն և այլն և այլն: Եւ ահա (ցոյց տալով) վերջումը գումարել է և իրա սեպհական ձեռքով գրել է, թէ 1893 թ. մինչև 1898 թ. մայիսի 1-ը Մուխառուն մնացի պարտ տոկոսով ընդամենը 2937 մ. սկ ձերով դուրս է գալիս 4500 մ.: Համաձայն մեր հաշիւ գումարից դուրս գանք 2000 մ. կը մնանք պարտ ձեզ 937 մ. դրան պիտի աւելացնենք 700 մ. որից 100-ը ստացուած է, իսկ 600 մ. մնում է, կը լինէ 1637 մ., յետոյ...

Պետրոս.—Համբերեցէք, պ. Սամսոն, սխալները կարող ենք ուղղել. հիմայ, պ. Սադայէլ, դուք հաւանակամ էք պ. Սամսոնի հաշիւը. այսինքն այն

հաշիւը, որ ինքը ողորմածն է թողել իր ձեռքով
դրուած:

Սադ.—Ես... ոչինչ չգիտեմ. մեր փողը լրիւ
ստացել ենք:

Վահան. —Պ. Սադայէլ, մէկ լսիր, այն ողոր-
մած Օհանէսը թէպէտ սխալուել է. միայն իւր
ընտանիքին է վաս տուել, բայց ոչ ձեզ օգուտ
է տուել, ձեր ապահովութեան համար մինչեւ ա-
ռողջանալը ձեզ մուրհակ է տուել, որ ասողջա-
նալուց յետոյ ձեզ հետ հաշիւ փակէ. ինչ անենք
մեռել է, դուք նրա լաւութեան փոխարէն գա-
տութիւն պիտի անէք: Երեսակայէք, որ նո ձեզ
մուրհակ չէք տուել և յանկարծ մեռել էք, արդեօք
դուք որտեղից պիտի այդքան գումար ստանայիք:
Հիմայ ես այն եմ ուզում ձեզ ասել, որ ողորմած
Օհանէսը ձեզ օգնել է և իւր ընտանիքը անբախ-
տացրել, դուք էլ պիտի չը զրկէք: Այ, համաձայն
այս հաշիւների դուք ձեր պարագը վերցրէք, իսկ
մնացածը յետ տուէք իրանց:

Մարգարիտ. —Ամի, չէ՞ որ մուրհակը տուեց
մինչեւ իր առողջանալը, և ձեզ քանի անդամ ասեց,
որ իմ պարտքս այդքան չէ, այլ տալիս եմ իր-
քեւ ապահովութիւն: Յիշում էք, քանի ան-
դամ նա ձեզանից 700 ր. փող ինդրեց, դուք մեր-
ժեցիք և հէնց նրա համար էլ մուրհակ տուեց
ձեզ, միթէ չես յիշում, մահից առաջ քեզ կանչել
էք խօսելու, և խօսակցութեան ժամանակ ասեց,
որ եթէ 700 մ. էլ տաք, իմ պարտքս մօտաւո-
րապէս կը լինի 2000 մ. և ձեզ պատւիրեց 2000
ր. մուրհակ գնել, ինչու համար, դուք 2500 մ.
էիք գնել, նա մինչեւ անդամ չգիտէք թէ 2500 մ.
մուրհակներ են, և որտեղից կարող էք իմանալ,

քանի որ մերձ աճան էք մուրհակ տալու ժամա-
նակ. չորս կողմից բանելով հազիւ կարողացաւ
մուրհակը ստուապրել. մինչեւ անդամ նատարիում
էլ չը կարողացաւ նկատել այդ բանը: Ինչ երկա-
րացնեմ, ամի, զու ինձանից լաւ ևս հասկանում
գործի էութիւնը: Իսկ 700 մանէթից, ամի, 100-ը
ստացուած և աացած գումարի համար, քեզ մի
քանի անդամ ասել եմ, զու պատասխանել ես,
բամբակները ծախուեն, յետոյ կը տամ: Բամբակ-
ներդ էլ ծախուեցին, բայց փողը չըստացանք.
ճիշտ է, ամի. (Մոլխանի լուսմ է):

Սադ.—Մենք 600 մ. պարտ չենք... մեր...
փողը լրիւ ստացել ենք:

Սամսոն. —(բարկացած) Պ. Սադայէլ, համբե-
րութիւնս հատոււ. ձեզ հետ չենք խօսում, իմ
հայրս եթէ իմանար, որ ձեզ հետ գործ պիտի
ունենայ, երբէք Մուխսուն չէք հաւատաւ, որով-
հետեւ ձեզ շատ լաւ էք ճանաչում:

Պետրոս. —Համբերութիւն ունեցէք, պ. Սամ-
սոն. Մուխսի, տուք վերջի պատասխանդ, այս
հաշիւներին համաձայն էք թէ ոչ, և եթէ ձեր
սխալմունքը ուղղենք, արդեօք մնացած փողերը
յետ կը տաք: Իսկ 600 մ. մինչեւ հիմայ ի՞նչու չէք
վճարել:

Մոլխան. —Ես արդէն ձեզ ասեցի, որ այդ
հաշիւն վերաբերեալ բոլոր հարցերը յանձնել եմ
Սադայէլին:

Սամսոն. —Ուրեմն, Մուխսի, ձեր խօսքերից
երեսում է, որ զուք չէք ուզում մեզ հաշիւ ներ-
կայացնել և մինոյն ժամանակ կրկնում էք, թէ
ձեր պահանջը լրիւ ստացել էք:

Մոլխան. —Ընդհակառակը, ես այդպէս չեմ

ասում, այլ յայտնում եմ, որ այդ հաշուի վերաբերեալ գործը յանձնել եմ Սաղայէլին:

Վահան.—Ախար, Մուլսսի, պլ. Սաղայէլը չէ համաձայնուում մեզ հետ:

Մուլսսի.—Այս, նա գիտէ, նրա գործն է:

Պետրոս.—Վերջապէս պատասխանէք, պլ. Սաղայէլ, ի՞նչպէս էք կամենում:

Սադ.—Ես գործ... չունիմ... ձեզ հետ իմ հաշիւս... լրիւ ստացել եմ... (Մուլսսին) գնանք ուշանում ենք (կողմը) անիծեալ Յակոյ, ինչնու է ուշանում, չէ գալիս մեզ կանչէ:

Սամսոն.—(աւելի բարկացած) Ահա, պարոնայք, տեսաք դրանց կեղծութիւնը, (դէպի Մուլսսին և Սաղայէլին) արդէն ստացայ ձեզանից իմ հաշիւը, շատ շնորհակալ եմ, եթէ իմանայի, այդպէս խաղաղութեամբ պիտի վերջանար մեր հաշիւը, ի դուք այս պարոններին նեղութիւն չէի տալ այստեղ հաւաքել: 5 որբի ճանկել էք և նրանց կոպէկները սեպհականացրէք. ի հարկէ ձեզ ձեռնատու է լոել, որովհետեւ կողոպտած գումարով մի տարի երկու ընտանիք կը պահէք: Զը լինի այն վաճառականութիւնը, որ ձեզանում է. ձեզի նման կեղտու և կեղծ վաճառականները խայտառակում են վաճառականութեան ամունը. դուք կոպէկանոց մարդիք եք. եթէ մի կոպէկ գողանաք և ձեր գողութիւնը հաստատեն, թէկուզ թքեն ձեր երեսին և ապտակեն, ձեզ համար միենայն է, այն կոպէկը թանգ արժէ: Այս, ես հիմայ հաստատում եմ, ձեզի պէսներն են իմ հօրս տունը քանդել, խաբերայութեամբ և կեղծաւորութեամբ: 10 մանէթի—25 տարուայ փասպանդայ ապրանք տուեցիք. 20 մ. հաշուին գրեցիք, բացի

դրանից — 120/0 էլ հաշուեցիք, և այդպիսով հարիւրներ յափշտակեցիք: Դուք կոպէկ-կոպէկ, փող տուեցիք իմ հօրս և 120/0 հաշուեցիք, բայց իմ հօրս 2000 ր. ամբողջ 6 տարի ձեզ մօտ էք, ինչնու համար նրան տոկոս չէք հաշում: Դուք կարծում էքիք իմ հայրս թոյլ մարդ էք, ինչ գրեիք կանցնէք. բայց ոչ, նա այնքան էլ թոյլ չէք, որովհետեւ մինչև վերջին թիւը իր հաշիւը գրել է և մինչև անզամ ընդհանուր գումարումը տոկոսն էլ է հաշւել: Ուրեմն տարէք այդ ճնշուած կոպէկները մի ընտանիք անբախտացնելով, և ձեր բամբակի վասար կը լցնէ. (կանխում է, բարձր ծայնով) վերկացէք, դուքս կորէք իմ աչքից հեռու... թքել եմ ձեր փողի և անունի վրայ, դուք խայտառակուելուց յետոյ, թող իմ փողս էլ կորչի, (Մուլսսին և Սաղայէլը կանգնում են), գներս կորէք, անառակներ, անպիտաններ, կոպէկանոց մարդիկ, թուն ձեր նամուսին. (Յակոն ներս է մոնում):

Տեսիլ XI.

Յակոյ.—Աղա, խանըմը կանչում է (կողմ), աղիս բանը բուըդ է (Մուլսսին և Սաղայէլը ուկում են զնով):

Մարգարիտ.—Միթէ... անխիդներ... ուիտել էիք մինչև վերջի բուքէն ճնշել... ապերախտներ... (ուշամետում է):



+ / Apple - ~~Red~~
+ ~~Urt.~~ -
+ ~~Worm~~ ~~for~~
+ ~~green~~ ~~leaf~~
+ ~~green~~ ~~leaf~~
+ ~~green~~ ~~leaf~~
+ ~~Worm~~ ~~leaf~~
+ ~~green~~ ~~leaf~~
+ ~~green~~ ~~leaf~~

